Ճարտասանական շնորհքով օժտված մտավորականը լավ գործ արեց ազգային գաղափարախոսության արմատավորման, ազատագրական պայքարը կազմակերպելու գործունեության մեջ: Այսօր էլ, երբ Արցախը կանգնած է կորստյան վտանգի առաջ, կարիք ունենք Վիգեն Գրիգորյան անհատների պես առաջնորդների: Ինչպես նրա ծննդյան 70-ամյակի կապակցությամբ ասել է այն ժամանակ ԱՅ ԿԳՄՍ նախարար Լ. Դարախանյանը, «Վ. Գրիգորյանը մնայուն արժեք է, որով մեր ազգային դիմադրողականության ու դիմացկունության մակարդակը կարող ենք բարձրացնել»:

Ապրիլի 5-ին ԱՅ խորհրդարանի ղեկավար Արթուր Թովմասյանը պատգամավորների հետ մեկտեղ ծաղիկներ է խոնարհել Աժ ճեմասրահի զոհված պատգամավորների հիշատակը հավերժացնող հուշատախտակի առջև:

«Այն արժեքավորները, որ որդեգրել էր Վիգեն Գրիգորյանը, մեզ համար պետք է լինի ուղեցույց, և մեզանից յուրաքանչյուրը պետք է կարողանա նրա թողած հետքն ու ավանդը դարձնել գործելանոց», - գնահատանքի ու խոնարհումի իր խոսքում ընդգծել է ՀՀԴ խմբակցության պատգամավոր Դավիթ Իշխանյանը:

Մենք պարտավոր ենք վերադառնալ ու ապրել այն արժեքներով, ինչ մեզ փոխանցում են Վիգեն Գրիգորյանի նմանները:

ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ Է ՊԵՏՔ

ԻՆՉՊԵՏ ԼԻՆԵԼ ԱՆԽԱՐՀՈՒՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՊՐՈՑ



Արամ ՓԱՆՉԱՆՅԱՆ «Այբ» դպրոցի տնօրեն

Չկա որևէ անհաղթահարելի հանգամանք, որևէ սկզբունքային սահմանափակում, որը խանգարում է որևէ դպրոցի դառնալ լավագույնն աշխարհում: Թե ինչպիսին կլինի դպրոցը, կախված է այնտեղ աշխատող մարդկանցից՝ ղեկավարներից ու մանկավարժներից: Ուրեմն, կան մեծ խոստովանումներ, որ այլ ազգերի մասնագետները մեզից ինչ-որ բանով սկզբունքայինորեն լավ են, այդպիսին են ծնվել, կան էլ որոշումներ, որ ամեն մեկս մեր տեղում անում ենք ամեն բան, որ մեր դպրոցը դառնա աշխարհում լավագույնը: Այլ տարբերակները նրանց համար են, ովքեր ի սկզբանե պարտվել են՝ առանց պատճառի և հիմնավորման:

Մենք գիտենք, որ մեր երկրում կան դպրոցներ, որոնք հեռու են աշխարհում լավագույնը լինելուց: Խնդիրը դա չէ, այլ այն, որ կան դպրոցներ, որոնց անձնակազմը, աշխատակիցները, ուսուցիչները չեն էլ երագում, որ երբևիցե լինեն աշխարհի լավագույն դպրոցը: Ինչու, և ի՞նչն է իրենց խանգարում երագել, ի՞նչն է իրենց խանգարում իրապես դառնալ աշխարհի լավագույնը: Խոսենք այսօր դրա մասին:

Եկեք սկզբից պարզենք, թե ինչ ասել է՝ աշխարհի լավագույն դպրոց: Բնավ չկա երկու լավ դպրոց, որ աշխատում են միևնույն միջավայրում, միևնույն տեսակի երեխաների հետ կան ունեն մեծ շատ դժվարություններ: Ամեն դպրոց ունի իր յուրահատկությունը, իր տարբերությունը: Այս առումով դժվար է համադրել և վերցնել աշխարհի դպրոցներից մեկը ու ասել՝ ահա սա է լավագույնը: Չարքը դա չէ, հարցը ոչ թե վերջնականապես է, որովհետև չի կարող լինել մեծ մասշտաբով: Կրթության ոլորտում չկա բացարձակ արդյունք, որից վեր հնարավոր չէ գնալ: Ամեն կրթական հաստատություն, լինի դպրոց, թե համալսարան, ունի զարգացման տեղ, ունի զարգացման ճանապարհ անցնելու: Սակայն թե դու ինչ չափանիշ են դնում քո առջև, որտեղ են պատրաստ կանգ առնել և առաջ չգնալ, ինչի հետ են պատրաստ համակերպվել, որոշվում է միայն ու միայն քո հավակնությամբ: Ու եթե չես հավակնում դառնալ աշխարհի լավագույն դպրոցը, լինել լավագույնն աշխարհում, հաստատ չես զարգանա, չես դառնա ընդհանրապես լավ դպրոց: Եվ

ընդհանրապես, որպես դպրոց չես կարող համարվել արժանի քո ամեն աշակերտին, վստահության փոքր այն չափաբաժնին, որ ստանում են հասարակությունից և այն գումարին, որ հասարակությունը ծախսում է այդ դպրոցի վրա: Հիմա կթվա, որ ես շատ խիստ պնդումներ եմ անում: Բայց եկեք մի քիչ խորանանք ու հասկանանք, արդյո՞ք այդ պնդումներն այդքան անհիմն են: Վերցնենք այլ կարգի հաստատություններ և հասկանանք, թե ինչն է նրանց խանգարում լինել աշխարհում լավագույնը: Ասենք, բժշկական հաստատություն: Այն կարող է ունենալ շատ լավ բժիշկներ, բայց բացի բժիշկներից ցանկացած բժշկական հաստատություն կարիք ունի պայմանների, սարքավորումների, որոշակի արտաքին անհրաժեշտ բաղադրիչների, դեղերի մատակարարման, տարբեր տեխնոլոգիաների, որոնք լոգիստիկ խնդիրներ են լուծում, պայմանավորում են բժշկական գործունեության և մարդկանց բուժելու գործընթացի հետ կապված այդ հաստատության հաջողությունը: Եթե վերցնենք տեխնոլոգիական ընկերություններ, այնտեղ կան գաղտնիքներ, կան ինչ-որ յուրօրինակ կուտակված գիտելիքներ, որոնք ապահովում են այդ ընկերության հնարավորություններն ու զարգացումը: Կան որոշակի տեխնոլոգիաներ, եզակի և հատուկ սարքեր ու սարքավորումներ կան իրենց գիտական արդյունքներ, որոնք կիրառում են իրենց աշխատանքի մեջ: Այդ ամենը նրանց դարձնում է ուժեղ ու պայմավորում է նրանց հաջողությունները: Մեկ այլ մեկը կարող է նույն բանն անել, բայց չհասնել նույնին:

Սակայն եթե մենք վերցնենք դպրոցը, ապա որո՞նք են այն գործոնները, որ խանգարում են նրան դառնալ աշխարհում լավագույնը: Որո՞նք են այն սկզբունքային սահմանափակումները, որ մենք կարող ենք անվանել և ասել՝ տեսեք, այ՛, սրա պատճառով այս դպրոցը երբեք չի դառնա լավագույնն աշխարհում: Տեխնոլոգիաները: Ոչ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ տեխնոլոգիաները, իհարկե, օգնում են ուսուցիչների աշխատանքին և կարող են որոշ դեպքերում բարելավել ուսումնական գործընթացը, բայց որևէ սկզբունքային ազդեցություն կրթական արդյունքների վրա չունեն:

Իսկ գուցե կա՞ն ինչ-որ գաղտնիքներ, որ, ասենք, ֆինանսական դպրոցները պահում են իրենց պատերի ներսում և ոչ ոքի հետ չեն կիսում: Բնավ: Հակառակը, դրանց մասին բազմաթիվ գրքեր կան գրված, ամեն բան տեսանելի է և հասանելի: Ցանկացած կրթական գաղափար կա, հասանելի է, հրապարակված է: Դժվարը գաղափարը չէ, խնդիրը դա իրականացնելն է: Ամեն բան մանկավարժական գիտության և կրթության մեջ բաց է ու հասանելի: Միգո՞ւցե ավելի լավ դպրոցներն ունեն ինչ-որ ավտոմատացված բարդ համակարգեր, ինչ-որ ծրագրային կարողություններ, որոնք թանկ են, որոնք անհրաժեշտ են որպեսզի դպրոցը լավ աշխատի: Ոչ: Դրանք իհարկե, մեծ դպրոցների համար ինչ-որ առումով նվազեցնում են ծախսերը, հեշտացնում գործը, բայց սկզբունքային ազդեցություն չունեն երեխաների արդյունքների վրա: Նրանց արդյունքներն ամբողջովին պայմանավորված են միայն երկու բանով. առաջին՝ մանկավարժների ցանկությունն ու կարողությունը կրթել սովորողներին և երկրորդ՝ դպրոցների ղեկավարների ցանկու-

թյունն ու կարողությունը՝ այդ մանկավարժների գործունեությանն առավելագույնն աջակցել ու նրանց գործունեությունը ճիշտ կազմակերպել: Սա ընդամենը մարդկանց և նրանց կարողությունների հարց է:

Իհարկե, մեր ուսուցիչները երկար տարիներ ստանում են ցածր աշխատավարձ և շարունակում են ստանալ: Իհարկե, մեր դպրոցները բավարար կախավորված չեն, և լաբորատորիաները չունեն բոլոր այն անհրաժեշտ սարքերը, որպեսզի աշակերտներն ուսումնասիրեն բնագիտական առարկաները: Դրանք այսօրվա իրականության առկա խոչընդոտներն են, որոնք հարթահարելի են, որոնք սկզբունքային չեն, որոնք չունեն որևէ գերզադուցիչ: Չկա մի բան, որը դրա ետևում կանգնած է, որ եթե անգամ դա անես, միևնույն է, ոչինչ չի ստացվի:

Ոչ, դրանք լուծելի խնդիրներ են, դրանք կլուծվեն: Բայց հարցը դարձյալ մնում է. այդ բոլոր խնդիրները եթե լուծվեն, արդյո՞ք մենք կունենանք, աշխարհի լավագույն կրթական համակարգը: Արդյո՞ք մեր դպրոցները դրանից հետո շատ արագ կդառնան լավագույններ: Դա է խնդիրը:

Նորից կրկնեն միտքը: Երբ որ մենք ունենք վարպետ, որը լավ վարպետ է, հմուտ է, բայց ունի վատ գործիք, նա կաշկանդված է: Եթե նա չունենա լավ գործիք, չի կարողանա աշխատել, անկախ նրանից, թե ինչքան նրան կվճարենք ամեն պատրաստած իրի համար: Ուսուցիչը մեծ խոչընդոտ չունի: Ուսուցիչ գործիքը դեպքերի ճնշող մեծամասնությամբ գրատախտակն է և կալիճը: Ուրեմն, մենք պետք է նպատակ դնենք դառնալ աշխարհի լավագույն ուսուցիչներ: Երբ մարդը նպատակ է դնում, առաջանում է պահանջ: Երբ շատ մարդիկ են նպատակ դնում, առաջանում է պահանջների համախմբում, ու դրանց հիման վրա առաջանում է շարժում: Երբ շարժում է առաջանում, լինում են փոփոխություններ: Ուրեմն, ամեն լավ բան գալիս է մարդկանցից, նրանց առաջին քայլից: Նստել ու ակնկալել, թե ինչ-որ մեկը ինչոր մի բան կանի, ու մեզ մոտ կյանքը արագ կփոխվի, ուսուցիչներին հարիր մոտեցում չէ: Հենց այն պատճառով, որ եթե իրենք այդ նույն մտածողությունը փոխանցում են երեխաներին, կործանում են այդ երեխաների կյանքը:

Տնօրեններն էլ պետք է այսօր իսկ նպատակ դնեն, որ իրենց դպրոցները պետք է դառնան աշխարհում, ոչ թե մարզում, ոչ թե Հայաստանում, այլ աշխարհում լավագույնները: Որովհետև, դարձյալ կրկնեն, ոչինչ չի խոչընդոտում, չկա մի պատճառ, որ իրենք կարող են բերել և ասել, որ դրա պատճառով ինքը երբեք չի կարողանա դա անել: Ուսուցիչները բավարար կարողություններ չունեն, որպեսզի զարգացնեն դրանք: Չեն ուզում, չեն ցանկանում մտածել՝ ինչ անել, որ զարգանան: Դիմում են ուսուցիչներին, նորից կրկնում են՝ ուզեք և ցանկացեք, որ լինի, այլապես ոչինչ չի փոխվի:

Ամեն երկիր, ամեն դպրոց ունի իր մարտահրավերները: Այն խնդիրները, որ մենք ունենք մեր հանրակրթության մեջ, որոնք մեզ համար թվում են ահեղի, անլուծելի, օրինակ, ցածր աշխատավարձերը, դպրոցների ծանր շենքային վիճակը, որ մենք դեռ շատ դպրոցներ չունենք, որոնք ունեն հագեցած լաբորատոր միջավայր, զարմանալի կերպով շատ հեշտ լուծվող խնդիրներ են: Ուրիշ համակարգերում է

շատ ավելի բարդ խնդիրներ կան: Բերեն օրինակներ: Աֆրիկայի երկրներից մեկում՝ Ռուանդայում ինքնուրույն թվականներին ուսուցիչների բացակայությունները դասերին գերազանցում էր 50 տոկոսը: Դա նշանակում է, որ դասերի կեսին երեխաները չէին տեսնում ուսուցիչ. ուսուցիչը չէր գալիս դասի: Այդ երկրում մեծահասակների զգալի տոկոսը, գրեթե կեսը, մինչև այսօր գրել և կարդալ չգիտի: Եվ չեն կարող օգնել իրենց զավակներին, որ նրանք կարողանան սովորել դպրոցում: Երեխաները ստիպված են ապավինել ուսուցիչներին: Այդպիսի միջավայրում մարդիկ գործում են, փոփոխություններ են բերում: Նույն Ռուանդայում այսօր իսկ բոլոր երեխաները հաճախում են դպրոց, կրթության որակը բավականին բարձրացել է: Այո, նրանք ունեն խնդիրներ ուսուցիչների որակների հետ, ունեն այլ տեսակի խնդիրներ, բայց տեսնում են փոփոխություն ու ոգևորվում են: Եվ հասատ նրանց կրթության ղեկավարները, առաջնորդները հավակնում են իրենց երկիրը դարձնել կրթության առումով աշխարհի առաջատարը: Այլապես այդ բոլոր փոփոխություններն անհնար կլինեին:

Կարծում եմ՝ ձեզից շատերին զայրացրին իմ խոսքերը: Մտածեցիք, որ այս մարդը խոսում է առանց գիտակցելու, թե ինչ վիճակ է դպրոցներում, որքան են ուսուցիչները տառապում, որքան դժվար է գտնել այս կամ այն խնդիրների լուծումներ, որոնք ջրհեղեղի նման թափվում են ուսուցիչների ու դպրոցների գլխին: Որ երեխաները չեն ուզում սովորել, որ ծնողները սխալ են ընկալում և գիտակցում կրթության նպատակները ու շատ հաճախ անտեղի և անհեթեթ ճնշում են գործադրում դպրոցի ուսուցիչների վրա: Այդ ամենը հասկանալի է, բայց աշխարհի լավ դպրոցը ոչ թե այն դպրոցն է, որում սովորում են աշխարհի լավագույն երեխաները, որոնք շատ են ուզում սովորել և որևէ խնդիր չեն առաջացնում ուսուցիչների համար, այն դպրոցը չէ, որտեղ սովորում են այն ծնողների երեխաները, որոնք շատ կարևորում են կրթությունը և ամեն աջակցություն ցուցաբերում են դպրոցին: Այդպիսի դպրոց լինելը շատ հեշտ է, դա չէ աշխարհի լավագույն դպրոցը, այլ այն, որտեղ ամեն երեխա ստանում է լավագույն հնարավորություն, որը կարող է երբևիցե ունենալ, որպեսզի կրթության շնորհիվ կայանա կյանքում: Աշխարհի լավագույն դպրոցը այն դպրոցն է, որտեղ ուսուցիչներն ամեն օր էլ ավելի լավ են աշխատում, քան նախորդ օրը: Երբ էլ ավելի մեծ ձգտումներ ունեն: Դա այն դպրոցն է, որտեղ չի անտեսվում դպրոցի գործունեության որևէ կարևոր բաղադրիչ, բոլոր բաղադրիչները հավասարապես կարևորվում են: Աշխարհի լավագույն դպրոցը այն դպրոցն է, որտեղ բոլորս կերպով ենք սովորել: Եվ որքան էլ այսօր ինձ մտովի հակադրվեք, իմ ասածները ձեզ տանջելու են, ու այլևս չեք կարողանալու հաշտ լինել այն թերությունների հետ, որ կան ձեր դպրոցում: Իսկ դպրոցը բարոյական հաստատություն է, և բարոյականությունը հենց այդպիսի մի բան է: Պահ է գալիս, նա մեզ սկսում է տանջել ու պահանջել մեզանից գործողություն: Եվ այլևս մեզ հանգիստ չի թողնում: Հանգիստ չի թողնում մեր խիղճը, քանի որ մենք գիտենք, որ կարող ենք: Կարող ենք, բայց չենք անում, մենք կարող և պարտավոր ենք, բայց միևնույն է, չենք անում:

ԱՆՅՎԱՅՎԵԼ Է «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՅԻՉ» ԵՎ «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ» ՄՐՅՈՒՅԹՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՓՈԽԸ

Մարտակերտի շրջանում այս տարի «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի շրջանային փուլին մասնակցության հայտ է ներկայացրել Կոճողտի Ա.Դանիելյանի անվան միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ռուզաննա Սարոյանը, իսկ «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթին՝ «Մարտակերտի թիվ 1 պետական ման-

կապարտեզ» ՊՈԱԿ միջին խմբի դաստիարակ Մարինե Օհանջանյանը: Տեղի է ունեցել շրջանային փուլի գնահատող հանձնաժողովի միտքը, որտեղ քննարկվել և ուսումնասիրվել են թեկնածուների կողմից ներկայացված տեղեկատվություններն ու փաստաթղթերը՝ համաձայն ԱՀ ԿԳՄՍ նախարարության հաստատած կարգի: Հաշվի առնելով թեկնածու-

ների ինչպես մասնագիտական հմտություններն ու կարողությունները, այնպես էլ աշխատանքային փորձն ու կրթադաստիարակչական աշխատանքում մեթոդական մոտեցումները՝ հանձնաժողովը հավանություն է տվել թեկնածուներին հանրապետական փուլին մասնակցելուն: Նշենք, որ մրցույթները կազմակերպում է

ԱՀ ԿԳՄՍ նախարարությունը, անցկացվում է 3 փուլով: Մրցույթների հանրապետական փուլն անցկացվելու է Ստեփանակերտում՝ Ուսուցչի օրվան ընդառաջ:

Աղբյուրը՝ «Չրաբերդ» թերթ

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

ՆԿԻՐՎԱԾ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆՊԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ

Մարտի 29-ին Ստեփանակերտի «Եվրոպա» հյուրանոցի ժողովարարհուն անցկացվեց կլոր սեղան: ԱՅ ԿԳՄՍՆ, ԱրՊԴ ռուսաց լեզվի ամբիոնի և Արցախում ռուսական համայնքի հետ համատեղ կազմակերպված այդ միջոցառմանը մասնակցում էին ԿԳՄՍՆ ներկայացուցիչներ, բուհերի և հանրապետության համրակրթական դպրոցների ռուսաց լեզվի մասնագետներ, ԱՅ նախագահի կրթության հարցերով խորհրդակցանքեր, ԳԹԿ տնօրենը, Արցախում ռուսական համայնքի ղեկավարը:

Բացման խոսքով հանդես եկավ միջոցառման նախաձեռնող՝ ԿԳՄՍՆ կրթության տեսուչ և ռուսաց լեզվի գլխավոր մասնագետ, վաստակավոր մանկավարժ Ռուբեն Օսիպովը: Իր խոսքում նա նշեց, որ 2020թ. Արցախյան պայքարից մեծ ողբերգություն՝ տարավ ահավոր պատերազմ, որը խլեց մի քանի հազար հայորդիների կյանքեր: Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին Արցախյան պատերազմներում նահատակվածների հիշատակը:

Շարունակելով իր խոսքը՝ Ռ.Օսիպովը մեջբերեց հայ ժողովրդի մեծ բարեկամ Կիմ Բակչիի բառերը, որի ածյունամոխիքը նրա իսկ ցանկությամբ ամփոփված է Շուշիում: «Չի կարելի հաղթել այն ժողովրդին, որը պատրաստ է մեռնել, բայց մնալ իր հողում»: «Արդեն հարյուր օրը ավելի քան մեկ ամիս առաջ հատած է ցայտոր հարևան երկրի կողմից շարունակվող Արցախի շրջափակումը վկայում է, որ մենք լի ենք վճռակամությամբ՝ դիմակայելու»,- ասաց բանախոսը: Ամրադառնալով կլոր սեղանի թեմային՝ նշեց, որ ԼՂԴ-ում միշտ առանձնահատուկ վերաբերմունք է եղել ռուսաց լեզվի նկատմամբ, որն ամենատարածված հաղորդակցական լեզուն է հայերենից հետո: Ռուսաց լեզվի դասավանդման հարցը մշտապես եղել է ԱՅ ԿԳՄՍ նախարարության ուշադրության կենտրոնում: Նա տեղեկացրեց, որ ռուսական համայնքի նախագահ Ալ. Բորդոյի նախաձեռնությամբ և ԿԳՄՍ-ի աջակցությամբ անցյալ տարվա օգոստոսին արցախցի ռուսաց լեզվի 5 ուսուցիչներ գործուղվել էին Սանկտ Պետերբուրգ, 10-ը Գորիս քաղաք՝ որակավորման դասընթացներ: Նախատեսվել էր սեպտեմբերին անցկացնել կլոր սեղան, սակայն Չայաստանում տեղի ունեցած դեպքերով պայմանավորված՝ միջոցառումը հետաձգվել է, և ահա այն իրականացվում է:

Կլոր սեղանի նպատակն էր հայկական դպրոցներում ռուսաց լեզվի ուսուցիչների մասնակավարժական փորձի տարածումը, առարկայի դասավանդման հրատապ խնդիրների ի հայտ բերումը: Կլոր սեղանն անցկացվեց երեք փուլով. 1-ին՝ ռուսաց լեզվի դասավանդման ընթացքում ակտիվ մեթոդները, հնարներն ու ձևերը, 2-րդ՝ ռուսաց լեզվի միասնական քննությունների խնդիրների մասին, 3-րդ՝ ռուսաց լեզվի օլիմպիադայի առավելություններն ու բերությունները:

Մինչև բուն աշխատանքին անցնելը ելույթի համար խոսքը տրվեց ԱՅ ԿԳՄՍ փոխնախարար Դասմիկ Մինասյանին, որը ողջունեց մասնագետներին և գրականության ամբիոններին, որոնց մասնագետներն անցած աշնանը արձագանքել են նախարարության խնդրանքին՝ աջակցելու թարգմանչական աշխատանքում, «ԱՅ բարձրագույն կրթության մասին օրենքը» ՈՂ փորձագիտական հետազոտության ուղարկելու նպատակով:

Այս օրակարգային հարցերի շուրջ ըստ վերը նշված փուլերի լավեցին ելույթները: Ստեփանակերտի Ալ. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի և գրականության մեթոդավորման նախագահ Ստելա Պողոսյանը իր տպավորությունները

ներկայացրեց անցած տարվա ամռանը Սանկտ Պետերբուրգում անցկացված ուսուցիչների որակավորման դասընթացներից: Ռուսաց լեզվի դասավանդման ժամանակ օգտագործած մեթոդների ու հնարների մասին ելույթ ունեցան Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի ուսուցչուհի Ն. Բաղդասյանը, թոշակառու մանկավարժ, այժմ՝ Շուշիի տեխնոլոգիական համալսարանում դասավանդող Վերա Խաչատրյանը: Ռուսաց լեզվի միասնական քննությունների արդյունքների վերլուծությանը հանդես եկավ Ռ. Օսիպովը, աշակերտների ռուսաց լեզվի միասնական քննությունների նախապատրաստելու դժվարությունների մասին՝ ԱրՊԴ ռուսաց լեզվի ամբիոնի ավագ դասախոս Ն. Մարգարյանը: Ռուսաց



լեզվից օլիմպիադայի անցկացման շուրջ իր դիտարկումները ներկայացրեց ԱրՊԴ ռուսաց լեզվի ամբիոնի ավագ դասախոս Ի. Արամյանը: Արձարձակած հարցերի շուրջ ներկաները կատարեցին մտքերի փոխանակություն: Այժմ՝ հանգստանալից:

Ստեփանակերտի Ալ. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի և գրականության մեթոդավորման նախագահ Ստելա Պողոսյանի ՏՊՎՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Սանկտ Պետերբուրգում անցկացված ուսուցիչների որակավորման դասընթացից.

Ս. Պողոսյանը նախ իր գոհունակությունը հայտնեց հանրապետության ռուսաց լեզվի մասնագետների՝ արդեն ավանդական դարձած մեծ հանդիպումների առթիվ: Ըստ բանախոսի՝ առհասարակ ցանկացած լեզու տվյալ ժողովրդի մշակութային արժեքն է: Դա այն արժեքն է, որը կարող է հավաքել մարդկանց ամբողջ աշխարհից: Սանկտ Պետերբուրգում բարի ավանդույթ է դարձել ամեն ամառ հախկին խՍՀՄ հանրապետություններից հավաքել մարդկանց, որոնք միացնում է ռուսաց լեզուն: Նրանք հանրակրթական դպրոցների ուսուցիչներն են, բուհերում դասավանդողները: Արցախի ուսուցիչներն առաջին անգամ էին մասնակցում այդ դասընթացներին, և, օգտվելով մարդկանց, Ս. Պողոսյանը երախտագիտություն հայտնեց ռուսական համայնքի ղեկավար Ալեքսանդր Բորդոյին, որի ներդրումը մեծ է իրենց մասնակցության մեջ, ինչպես նաև ԿԳՄՍ վերջին երկու նախարարներին, որոնք սպասեցին ինչ ուսուցիչների այցը Սանկտ Պետերբուրգ: Նա հույս հայտնեց, որ պարոն Բորդոյը դա կդարձնի ավանդույթ, և ամեն տարի արցախցի ուսուցիչները կմասնակցեն սանկտպետերբուրգյան դասընթացներին:

Դասընթացները տևել են օգոստոսի 7-ից մինչև 20-ը: Ինչպես ասաց Ս. Պողոսյանը, համատեղել են օգտակարը հաճելիի հետ: Այլ կերպ չէր էլ կարող լինել. չէ՞ որ ամբողջ ռուսական դասական մշակույթը կենտրոնացված է Սանկտ Պետերբուրգում. «Ես Սանկտ Պետերբուրգում առաջին անգամ չէի լինում, բայց ամեն դեպքում ինձ համար նոր բացահայտումներ են արել: Դպրոցում իմ դասավանդման 32 տարիների ընթացքում այս տարի իմ աշակերտներին Պուշկինի լիցեյի մասին կարող եմ ներկայացնել ակամատեսի աչքերով: Ես այնտեղ տեսել եմ Պուշկինի փոքրիկ սենյակը, նրա սյուրբուրկը, գրիչը, գրասեղանը և Լիցեյի գրասեղանը...»: Իհարկե, հարցը միայն այն չէ, որ նրանք եղել են այնտեղ ու տեսել այդ ամենը, այլ՝ թե ինչպես են անց-

կացվել որակավորման դասընթացները, որտեղ ռուսերենը որպես օտար լեզու է մասնակցիցների համար: «Դա ինչ-որ տեղ էր համապատասխանում մեզ, քանի որ մեզ համար ռուսերենը օտար լեզու չէ: Մեր երեխաները, որոնք 6 տարեկանից են գալիս դպրոց, եթե ոչ կատարելապես, այնուամենայնիվ, ճանաչում են ռուսերենի տառերը, հասկանում են լեզուն, անգամ՝ խոսում: Դասընթացներին մասնակցում էին մասնագետներ խՍՀՄ նախկին հանրապետություններից. Միջին Ասիայից, Բելառուսից, մեր հարևան երկրից: Նրանք կիսվել են իրենց փորձով՝ ասելով, որ իրենց դպրոցներում երեխաների ուսուցումն իրենք սկսում են ամենատարրական բաներից՝ ի՞նչ է քո անունը, ո՞վ ես դու և այլն: Ս. Պողոսյանը վկայեց, որ այդ խնդիրները մեզ մոտ չկան և դիմելով Ալ. Բորդոյին, խնդրեց, որ եթե Արցախից էլի ուսուցիչներ ուղարկեն դասընթացների, ավելի հաճելի կլինեց, եթե նրանք ընդգրկվեին ռուսական դպրոցների ուսուցիչների համար կազմակերպվող դասընթացներին, քանի որ դրանք մի այլ մակարդակի են: Ավելի քան 2 շաբաթ տևած 72-ժամյա դասընթացները, որոնց կեսը տեսական էր, կեսը՝ գործնական, ներառում էին հետաքրքիր թեմաներ: Բանախոսի տպավորությանը՝ ռուսաց լեզվի դասավանդման ժամանակակից մեթոդիկան իր բարձրության վրա է, եթե դասարանն ամբողջությամբ համակարգչայնացված է, այ-

սինքն՝ յուրաքանչյուր աշակերտ իր դիմաց ունի համակարգիչ: Իհարկե, մեզ մոտ՝ Արցախում էլ դասարաններում կան պրոյեկտորներ, համակարգիչներ, բայց քիչ են: Եվ այդ առումով այսօր մեր ուսուցիչների գլխավոր զենքն իրենց փորձն է, որով ամեն ուսուցիչ կարող է գիտելիքը գրագետ ձևով հասցնել աշակերտին:

Դասընթացների առաջին օրը ցուցադրվել է ռուսաց լեզվի մակարդակի աղյուսակը տարբեր երկրներում: Առաջին տեղում Բելառուսն է, երկրորդ տեղում՝ Ղազախստանը, երրորդ տեղում՝ Ադրբեջանը: Չայաստանն առաջին ութնյակում էլ չկա: Դա (ՀՀ-ից մասնակցում էր 13 ուսուցիչ), այդ թվում՝ արցախցի ուսուցիչները՝ դասընթացների ժամանակ ցուցաբերել են մասնագիտական բարձր պատրաստվածություն, կրկնուր արցախցի մասնագետներն իրենց բարձունքի վրա էին, ինչն ակնհայտ էր բոլորի համար, և հայ մասնագետները խիստ զարմացած էին մեծ ինդեքսավորումից: Բոլորի համար անհասկանալի էր, թե ինչու Չայաստանը ետին թվում է, և երբ նրանք զարմացած հարցրել էին այդ մասին, կազմակերպիչները շատ պարզ հասկացրել են, որ Չայաստանից իրենց չեն հրավիրում ռուսաց լեզվի դասագրքեր կազմելու: «Եվ ամբողջ դասընթացները մի մեսիջ (հաղորդագրություն) էին՝ դուք կանչեք մեզ, և մենք միասին կկազմենք ձեր դասագրքերը ձեր մշակույթին համապատասխան»,- պատմեց Ս. Պողոսյանը: Դազախստանի, Կիրգիզիայի, Տաջիկստանի մասնագետներն իրենց ելույթներում ասացին, որ ռուսաց լեզվի դասագրքերը կազմում են ռուս մասնագետների հետ համատեղ: Ի դեպ, մեր հարևաններն այդ առումով շատ առաջ են գնացել:

Դասընթացների ժամանակ շեշտադրումը դրվում էր աշակերտների բանավոր խոսքի զարգացման վրա և ոչ այնքան՝ քերականության: Նրանք խորհուրդ էին տալիս երեխաների հետ դիտել ֆիլմեր, մուլտֆիլմեր, ընթերցել գրքեր, մանկական ստեղծագործություններ և միասին վերլուծել: Չէր կարևորվում քերականության մեջ խորանալը: Կարևորն այն է, որ երեխաները կարողանան հաղորդակցվել ռուսերենով:

Ս. Պողոսյանի տպավորություններն ավելի բարձր էին մշակութային ծրագրերից: Նա ևս մեկ միջոցառման մասին պատմեց: Իրենց տարել էին տաղանդների ակադեմիա. «Ընթացքում նախանձ մարդ չեմ, բայց այդ պահին նախանձեցի նրանց: Դա մի աննկարագրելի տեղ էր. բոլորը գիտեին, թե ինչքան տաղանդավոր մարդիկ են դուրս եկել Արցախից, բայց այն, ինչ անում է Սանկտ Պետերբուրգը ռուս

տաղանդավոր երեխաների համար, միայն տեսնել է պետք: Չսկայական, վերանորոգված շենք հատկացված երեխաներին, որոնք խիստ ընտրության միջոցով են այդտեղ ընկնում: Այդ շենքում յուրաքանչյուր կաթինետ ներկայացնում է գիտության մի ճյուղ: Նայում էի ու մտածում, թե ի՞նչ երջանկություն է ունենալ տաղանդ ու այն կարողանալ արգագանել այդպիսի պայմաններում: Եթե ակադեմիա չէ, մենք էլ գոնե տաղանդների կենտրոն ունենալիք, շատ լավ կլինեց: Բոլորը գիտեն, որ արցախցի երեխաները տաղանդավոր են, բայց՝ ինքնահոսի մատմված»:

Դասընթացների վերջում կազմակերպվել էր կլոր սեղան: Արցախցի ուսուցիչները հիանալի պաշտպանել են իրենց թեմաները: Առանց համակարգչի ու պլանշետի նրանք ցույց տվեցին իրենց փորձը, եզրափակեց Ս. Պողոսյանը:

Կարծիք խնդրի վերաբերյալ

Վարկանիշային աղյուսակի առնչությամբ ԱրՊԴ ռուսաց լեզվի ամբիոնի դասախոս Նունե Առաքելյանն իր տեսակետը հայտնեց. «Մարդիկ, ովքեր կազմում են այդ աղյուսակը, ինչո՞ւ հաշվի չեն առնում, որ Բելառուսը սլավոնական երկիր է, որտեղ բելառուսներն գրեթե ոչ ոք չի խոսում, Ղազախստանում մեծ թիվ են կազմում ռուսները: Իսկ Ադրբեջան պետությունը ստեղծման օրից եղել է բազմազգ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ինչպես այս, այնպես էլ միջինասիական երկրները պետություն դարձնելու և զարգացնելու համար Մուսկովայից, Լեւինգրադից ուղարկվել են ռուսներ, որպեսզի տեղում պետական մասնագետներ, քանի որ իրենց ստեփանակերտ չունեն: Իսկ Չայաստանի մասին էլ երբ ասում են, թե մոնոնացիոնալ երկիր է, պետք է պատասխանել, որ մոյս այդ Կենտրոնից դարձյալ ուղարկվում էին մասնագետներ, բայց՝ հայ, քանի որ Ռուսաստանում ապրում էին մեծ թվով հայ մասնագետներ, որոնք զարգացնում էին այդ երկիրը»: Ինչ մնում է նրան, որ հայերը ռուսներին չեն հրավիրում իրենց մոտ, և ունեն Առաքելյանը վկայեց որպես ռուսաց լեզվի ամբիոնի նախկին վարիչ, որ ինքը հրավիրել է. «Ես չգիտեմ Չայաստանում ինչպես, բայց Արցախից այդ հրավերը եղել է, բայց անտեսել են: Ռուսաց լեզվին նվիրված՝ Արցախում գիտեցք ինչ կոնֆերանսներ, միջոցառումներ են եղել, բայց ոչ մի անգամ մեր հրավերին չեն պատասխանել» (զուրկ վախեցել են Ադրբեջանի «սև ցուցակ» ընկնելուց):

Բայց ռուսական համայնքի հրավերով մի երկու անգամ մասնագետները եկել են բայց երկի չեն պատկերացրել, թե ուր են գալիս, քանի որ ամենատարրական մակարդակի վրա էին մեզ պատկերացնում: Օրինակ, խորհուրդ էին տալիս դիտել «Կովկասի գերուհին» ֆիլմն այն դեպքում, երբ յուրաքանչյուր արցախցի անգիր գիտի այն»:

Ժամանակակից և ավանդական մեթոդները դասավանդման ժամանակ

Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի ուսուցչուհի Նարինե Բաղդասյանը, որն անցած տարի ամռանը մասնակցել է Գորիսում անցկացված ռուսաց լեզվի դասընթացներին (վարում էր Մոսկվայից եկած պրոֆեսորը), կլոր սեղանի մասնակիցների ուշադրությանը ներկայացրեց ժամանակակից մանկավարժական մեթոդները՝ որպես օտար լեզվի դասավանդման մեջ: Իսկ վաստակավոր մանկավարժ Վերա Խաչատրյանը, ընդհակառակը, պատմեց, թե ավանդական մեթոդներով ինքն ինչպես է հասել լավ արդյունքների: «Ես, որպես անցյալ դարի ուսուցիչների ներկայացուցիչ, շատ նոր բառեր չեմ օգտագործի, քանի որ իմ սերնդի մարդիկ, որոնց ներկայացուցիչները մասնակցում են այս կլոր սեղանին, ինչը շատ հաճելի է, ընդամենն ունենին մի կտոր կավիճ, գրատախտակ, ինքնաշեն պլակատներ և այնուամենայնիվ, մենք այնպես էինք անում, որ երեխաները շատ սիրեն ռուսաց լեզուն»,- ասաց նա:

Այս ևս ինչեց, որ մի քանի տարի առաջ, երբ եղել է Աստղաշենում (նախկինում՝ Դաշքունյալ), որտեղից սկսվել է իր մանկավարժական գործունեությունը, տեսել է, որ մեկն իր ետևից վազելով եկավ ու զրկեց իրեն՝ ասե-

ՎԼՈՐ ՍԵՂԱՆ

լով. «Ընկերի հաջատրյան, այդ Դո՞ւք եք», և հավաստիանալով, որ իրոք նա է. ասել էր. «Մինչև հիմա Ձեր սովորեցրած «Антошка» և «Путь дегуст неключиной» երգերը հիշում ու երգում եմ բռնորոշ համար: «Այդ պահին ես զգացի, որ երևի ինչ-որ մի մնայուն բան թողել եմ: Չի եղել համակարգիչ, պրոյեկտորը դիաֆիլմերի համար եղել է տեխնիկայի հրաշք: Բայց աշակերտներին սովորեցրել ենք սիրել լեզուն ու նրանով ստեղծված մշակույթը: Այսօր էլ դա արվում է նոր մեթոդներով: Կարևորն այն է, որ մենք ծառայում ենք նույն նպատակին՝ երեխաներին ուսուցանում ենք մեծ ու հզոր ռուսաց լեզուն:

Մայրենի լեզվի ազդեցության առանձնահատկությունները ռուսերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման գործում

Թեման մատուցած. Խաչատրյանի համոզմամբ՝ մայրենի լեզվի ազդեցությունը ռուսաց լեզու դասավանդողները մշտապես զգում են: Պե՞տք է գործածել մայրենին ռուսաց լեզվի ուսուցման ընթացքում: Մի ժամանակ Ռ. Օսիպովը նման բանավեճ էր նախաձեռնել: Ուսուցիչների մի մասը գտնում է, որ այո, պետք է գործածել, մյուս մասը՝ ոչ: Ի վերջո եկել են այն եզրահանգման, որ ցանկացած մեթոդ կիրառելի է, միայն թե երեխաները հասկանան և սիրեն ռուսաց լեզուն: Օտար լեզվի ուսուցումը միշտ բախվում է մայրենի լեզվին ու բարբառին: Մեթոդի հիմնական պահանջը՝ հաղորդակցման հնարավորությունը, ոչ թե բացառում, այլ ենթադրում է մայրենի լեզվի գործածում: Այն առանձնահատուկ տարածայնություններ չի առաջացնում օտար, այդ թվում՝ ռուսաց լեզվի դասավանդման ժամանակ: Հայտնի մարդկանցից մեկն ասել է. «Մայրենի լեզուն կարելի է դուրս մղել դասագրքերից, բայց չի կարելի դուրս մղել սովորողի գլխից: Մենք պետք է մեկընդմիջտ իմանանք, որ սովորողի մայրենի լեզուն «մասնակցում» է օտար լեզվի դասերին, ինչքան էլ ուզենանք այն վտարել: Դրա համար մենք պետք է «թշնամուց» այն վերածենք «բարեկամի»:

Արցախի դպրոցականների համար դժվարությունն այն է, որ ռուսերենը ոչ թե երկրորդ, այլ երրորդ լեզու է: Տանը, փողոցում նրանք խոսում են բարբառով, դասին՝ գրական հայերենով: Անգամ գրական հայերենը, որը նրանց ուսուցման լեզուն է, նրանց համար դարձյալ նոր է. նրանք նախ պետք է վարժվեն այդ լեզվին: Առաջին դասարանում երեխան տառկապ է անում **շ ի շ**՝ արտասանում՝ բոթու: Պարզապես մեր երեխաներն այն առավելություն ունեն, որ մեր բարբառում կան բավական թվով ռուսերեն բառեր:

Այսպիսով, ռուսաց լեզվին տիրապետման ընթացքում սովորողներն օբյեկտիվորեն առնչվում են երեք լեզվի. մայրենին՝ գրական հայերենին, Դարաբառի բարբառին ու ոչ մայրենի ռուսերենին: Վ. Խաչատրյանի իր փորձով վկայեց, որ ուժեղ ազդեցություն ունի ոչ այնքան գրական հայերենը, որքան՝ բարբառը: Ռուսաց լեզվի ուսուցիչը, որը տիրապետում է գրական հայերենին ու բարբառին, կարող է 1-ին՝ ուղղել աշակերտի սխալները, 2-րդ՝ տարբերակել սխալները այլ ծագման սխալներից և գտնել ավելի հարմար մեթոդներ՝ ուղղելու դրանք:

Կան ինտերակտիվ տարբեր մեթոդներ կան, բայց երկի ամենակարևոր մեթոդն այն է, երբ երեխաներին սովորեցնում ենք ընթերցել, սիրել գիրքը, որովհետև ամեն ինչ սկսվում է դրանից:

Վերջում Վ. Խաչատրյանը իր գոհունակությունը հայտնեց ուսուցիչների մասն հավաքի առթիվ. «Հաճելի է լինել նման ինտելեկտուալ միջավայրում, որտեղ տիրում են գեղեցկությունն ու բարոյությունը, որը նպաստում է լինել իսկական արցախցիներ՝ ուժեղ, իմաստուն և գեղեցիկ»: Նա բոլորին մաղթեց առողջություն, խաղաղություն, սիրել իրենց մասնագիտությունը, ու միայն այդ դեպքում և անգամ առանց նորագույն տեխնոլոգիաների առկայության կարող են երեխաների մեջ սեր առաջացնել ռուսաց լեզվի և առհասարակ գեղեցիկի նկատմամբ:

2008-2022 թվականների ռուսաց լեզվի միասնական քննությունների արդյունքների վերլուծությունը

Այս հարցի վերաբերյալ գեկուցող Ռուբեն Օսիպովը դարձյալ մեքերեց Կիմ Բակչիի խոսքը: Նա մի քանի անգամ մասնակցել է

Արցախում կազմակերպված Ռուսական խոսքի օրերին և հարցազրույց տալով «Նոյյան Տապան»-ին, ասել է. «Դարաբառում դպրոցի տնօրենները, ուսուցիչները, աշակերտները իսկական հայրենասերներ են և ռուսաց լեզվի պահպաններ»:

Այսօր հանրապետության դպրոցների ռուսաց լեզվի ուսուցիչները, ԱրՊՀ-ն և «Մետրոպ Մաշտոց» համալսարանները շարունակում են պահպանել ռուսաց լեզվի դասավանդման որակը: Բայց, ցավոք, վերջին տարիներին ռուսաց լեզվի դիմորդների քանակը կրճատվել է: Այսօր բարձր դասարանցիները նախընտրում են անգլերենը՝ որպես օտար լեզու, քանի որ թեստերի ժողովածուները՝ շտեմարանները, կազմված են դպրոցական ծրագրի հիման վրա, իսկ ռուսաց լեզվի ժողովածուների հեղինակները դրանք կազմում են ռուսական դպրոցի ծրագրի հիման վրա: Այդ ժողովածուները կրում են ակադեմիական բնույթ և ավելի շատ համապատասխանում են ռուսական դպրոցի շրջանավարտներին և ռուսաց լեզվի ֆակուլտետի ուսանողներին, ինչը հատկապես անմատչելի է գյուղական դպրոցների աշակերտների համար: Այդ պատճառով էլ միասնական քննությունների ցուցանիշները ցածր են, մեծ թիվ են կազմում դրական շեմից ցածր միավորները: 2008-2011թթ. առաջադիմության տոկոսն ու որակը բարձր էին, իսկ 2011թ. միասնական քննությունից անմիջապես հետո դիմորդների,

2014թ. ՀՀ ԿԳՄՍՆ ներկայացուցչի կողմից պատասխանելով, որում իր անհամաձայնությունն էր հայտնում համեմատողովի բողոքի վերաբերյալ: Այն կարծիքն ստեղծվեց, որ նա թեստերի երեք ծողովածուի հեղինակն է, այդ պատճառով էլ չի ընդունում բողոքը:

2016թ. ԱրՊՀ ռուսաց լեզվի ամբիոնի դասավանդողների կողմից դիմում է հղվել ՀՀ և ԱՀ ԿԳՄՍ նախարարներին, որում խոր մտահոգություն էր հայտնվում ռուսաց լեզվի միասնական քննությունների արդյունքների վերաբերյալ: Դիմորդների գրեթե կեսը չի կարողացել հաղթահարել դրական շեմը: Եվ դա՛ Արցախում, որտեղ վերջ ռուսաց լեզվի նկատմամբ սկսվում է սեր տարիքից: Բուհերի դասավանդողները նշել են, որ այդպիսի վիճակը կարող է մեծ հարված հասցնել երիտասարդ արցախցիների՝ ռուսաց լեզվի տիրապետմանը և հայ-ռուսական դարավոր բարեկամությանը:

Ռ. Օսիպովը, դիտարկելով 2008-2022թթ. արդյունքները (առաջադիմություն, որակ) ըստ տարիների՝ այն եզրահանգումը մատուցեց, որ դրանք դիմորդների իրական միավորները չեն, քանի որ չեն համապատասխանում նրանց փաստացի գիտելիքներին: Մասնավորապես ինքը, որը նաև տարբեր տարիներ աշխատել է հ. 3, հ. 8, իսկ այսօր՝ հ. 11 ավագ դպրոցում, իր աշակերտների օրինակով հաստատում է, որ ռուսաց լեզվին նրանց տիրապետման մակարդակը բարձր է:

Առաջին տարիներին ինքն էր ռուսաց լեզվի օլիմպիադայից ՀՀ եզրափակիչում մասնակցող դպրոցականներին ուղեկցում, և 1-ին տեղ զբաղեցնողներն ըստ ՀՀ որոշման պետք է մասնակցեին միջազգային օլիմպիադայի: Այդպես էին խոստացել, բայց հետո խոստումը չպահեցին: Այդ մասին իմացել է Կիմ Բակչին և իր հարցազրույցներից մեկում ասել, որ երեխաները և քաղաքականությունն անհամատեղելի են: Հետո արցախցի աշակերտները մասնակցում էին Մոսկվայում կազմակերպվող օլիմպիադաներին, բայց՝ Հայաստանի կազմում. «Ուզում եմ ասել, որ մեր երեխաները տաղանդավոր են, նրանք արժանավոր ապագայի սերունդն են: Բայց չգիտես ինչու, ցածր արդյունքներ են ունենում միասնական քննությունների ժամանակ»:

Կարծիքներ խնդրի վերաբերյալ
 Խնդրի առնչությամբ ծավալված մտքերի

փոխանակության ժամանակ հնչեցին տարբեր կարծիքներ:

Խնդիրն այն չէ, որ ռուսաց լեզվի մակարդակը ցածր է, այլ այն, որ ընդունակ երեխաները այլ վարկանիշային մասնագիտություններ են ընտրում: Իհարկե, նրանք խոսակցական ռուսերենին ավելի լավ են տիրապետում, քան անգլերենին, բայց որպես քննություն ընտրում են անգլերենը: Անշուշտ, մեծ դեր են խաղում նաև դասագրքերը:

Հարցի առնչությամբ ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանը մի քանի ճշտումներ արեց: 2008-2011թթ. ռուսաց լեզուն համեմուն էին ոչ որպես օտար լեզու: 2011-ից հետո՝ որպես օտար լեզու: 2012թ. Արցախում ավելի շատ էին ռուսերեն համեմունները, քան ամբողջ Հայաստանում: Ռուսաց լեզու ընտրում են հիմնականում ռուս բանասիրական և ՌԴ ռազմական ուսհաստատություններ ընդունվողները: Իհարկե, արդյունքների գնահատականը կարևոր է, բայց խնդիրը մեկ այլ տեղ է:

Երջաններում ռուսերենով խորացված դասարաններ չկան, մայրաքաղաքում էլ քիչ են: Չշոշափվեց նաև 3-րդ դպրոցի կարգավիճակի հարցը: Առայսօր այն անհասկանալի է: Մի քանի տարի հետո այնտեղ չեն լինի ուսուցիչներ տեխնիկական գծով:

Վերա Խաչատրյանը բարձրացրեց ժամաքանակի հարցը: 2-րդ դասարանում ընդամենը 2 ժամ է, և ուսուցիչը չի հասցնում մինչև տարեկանը ուսուցանել բոլոր տառերը:



Ստիպված է լինում վերջում մի քանի տառ միասին սովորեցնել: Եթե գոնե տարրական դասարաններում մեկական ժամով ավելացվի ժամաքանակը, երեխաները լավ հիմք կունենան:

Չշրջանցվեց նաև շտեմարանների թեման: «Շտեմարանով մենք սովորեցնում ենք անգիր անել և ոչ թե սովորել: Անգամ քննության ժամանակ, երբ պատասխանների հերթականությունը տարբերվում է շտեմարանից, սովորողը շփոթվում է: Մենք դրանով կորցնում ենք երեխաներին»,-ասաց ԳԹԿ տնօրենը: Այն աշակերտներին, ովքեր գյուղական բնակավայրերից են և ռուսաց լեզվի քննությունից ստանում են 11-12 միավոր, ԳԹԿ տնօրենը ավելի բարձր է դասում, քան մայրաքաղաքի այն շրջանավարտներին, ովքեր անգիր անելով են ստանում 20 միավոր, քանի որ վերջիններս բուհում մի քանի ամսից հետո իմացածը մոռանում են, իսկ գյուղերից եկածները, հակառակը, ավելի լավ են սովորում, քանի որ խելքով և ոչ թե հիշողությամբ են ստացել իրենց միավորները:

ԱրՊՀ ռուսաց լեզվի ամբիոնի ավագ դասախոս Ն. Մարգարյանն ավելացրեց, որ առաջին աչքի զարնող դժվարությունը դիմորդների մոտ շփոթմանը առաջացնող թեստերն են: Առաջադրանքներ են կազմվում դպրոցականներին բացարձակապես անծանոթ և անհասկանալի բառերով:

Ռուսաց լեզվի օլիմպիադայի առավելություններն ու թերությունները

ԱրՊՀ ավագ դասախոս Ի. Աղամյանը շոշափեց ռուսաց լեզու առարկայից անցկացվող օլիմպիադայի դրական և բացասական կողմերը:

ԿԳՄՍՆ տեսչության պետ Մ. Մխիթարյանի համոզմամբ՝ այդպիսի թեստերով օլիմպիադաներին մասնակցելը գիտելիք չի տալիս սովորողներին: Ընդհանրապես օլիմպիադաները տաղանդավոր երեխաներին ի հայտ բերելու համար են: Նախկինում եղել են միայն բնագիտամաթեմատիկական առարկաներից:

Դրա համար եթե ուզում էին աշակերտի ստեղծագործական միտքը կամ գրագիտությունը որոշել, տալիս էին շարադրություն կամ թելադրություն: Այսօր էլ դա ավելի արդյունավետ կլինի, քան թեստերով օլիմպիադան, որը հասցնում է այսպիսի իրավիճակի և հակասությունների: Հունամիտար առարկաներից ի՞նչ օլիմպիադա:

Համակարծիք լինելով այս մտքին՝ ԳԹԿ տնօրեն Յու. Քարամյանը հավելեց, որ ավելի նպատակահարմարը տարբեր թեմաներով մրցույթներ անցկացնելն է, իսկ թեստերով օլիմպիադայով ընդամենը աշակերտների գիտելիքներն են ստուգվում և ոչ թե իմեծերական ունակությունները, ստեղծագործականությունը: Շեշտեց նաև թեստերի ոչ գիտականորեն կազմումը: Այն, ինչ ներկայում մատուցվում է որպես թեստեր, ընդամենը ձևով են թեստ: Դրանք թեստին մոտ առաջադրանքներ են այստեղ և Հայաստանում. «Մենք մտքով ենք «թեստ» հասկացությունը, բայց թեստողովներ չենք պատրաստել: Դրա համար յուրաքանչյուրն իր կարեցածին պես է կազմում: Այնինչ դա գիտություն է»:

ԱՀ ԿԳՄՍՆ բարձրագույն և միջին մասնագիտական կրթության վարչության պետ Ռ. Մուսայելյանի տեսակետով հարցը միայն ռուսաց լեզվին չի վերաբերում: Բոլոր առարկաները բախվում են այդ խնդրին: Պատճառն ըստ նրա պետք է փնտրել ուսուցիչների մոտեցման մեջ. «Փոխանակ ծրագրային նյութը երեխաներից պահանջեն, դառն նրանք սովորել են, թե չեն սովորել, թեստային աշխատանք են կատարում»,-պարզաբանեց նա: Տարիներ շարունակ ինքը հետևել է մի երևույթի. ցանկացած դպրոց մտնելուց միջանցքում կանգնած հետևել է, թե որ ուսուցիչներն են շտեմարանով մտնում դասարան: Չի եղել դպրոց, որտեղ ուսուցիչը սեպտեմբերից դասարան մտնի առանց շտեմարանի: Անցյալ տարի մինչև երևան դիմորդները նախակ էին գրել, որ առաջադրանքը շտեմարանից չի եղել, բայց ո՞վ է ասել, որ անպայման շտեմարանից պիտի լինի: Կարևոր է, որ դասագրքից: Իսկ նրանց բարձրացրած հարցի պատասխանը դասագրքում կար: Շտեմարանից կախված, շտեմարանին գերի դարձածների մեջ է պետք է փնտրել խնդիրը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Վլոր սեղանն ամփոփեց Ռ.Օսիպովը:

- Մենք բոլորս միասին ստեղծել ենք լավ թիմ, գիտենք, թե ով ինչի է ընդունակ: Այս տարիների ընթացքում բազմաթիվ միջոցառումներ ենք անցկացրել: Ակզբում դրանք եղել են մեթոդական կոնֆերանսներ, ապա սկսեցինք անցկացնել Ռուսական խոսքի օրեր հանրապետական մասշտաբով, ընդ որում, ընդգրկել ենք և՛ Մարտակերտը, և՛ Հաղորթը, և՛ Քաշաթաղը: Եկեք վերիիշենք, թե ինչպես է Քաշաթաղում Կարինե Գարեգինովնան կազմակերպել կոմպոզիտոր Թարիվերդիկին նվիրված միջոցառումը: Անգամ ամենածայրամասային գյուղի դպրոցում լսել ենք ռուսերեն խոսք, և դա ռուսաց լեզվի ուսուցիչների վաստակն է: Այո, մեծ քաղաքներ գնալը, լսելն ու տեսնելը կարևոր հանգամանք են ուսուցչի տեսադաշտը մեծացնելու համար, բայց եթե ուսուցիչը չունի փորձ, չունենա իր մեթոդիկան, ինչ տեխնիկա էլ լինի, չի կարող բավարար գիտելիքներ տալ աշակերտներին: Այսօր ձեր ելույթները բարձր մակարդակով էին, ես ձեզ շնորհակալ եմ, դա մեծ աշխատանք է: Դրա համար պետք է վերլուծել գրագետ ու ներկայացնել: Ես երախտապարտ եմ բոլորին: Այստեղ նստած են Մարտունուց ուսուցիչներ: Հանգիստ կարող ես մտնել Մարտունու հ. 1, հ. 2 դպրոցներ և ներկա լինել ռուսաց լեզվի օրինակելի մեթոդներով դասերի: Նույնը տեսել ենք Հանդրուբում, Մարտակերտում, Շահումյանի շրջանում, Ասկերանում: Տեսել ենք, թե ինչպես են աշխատում մեր ուսուցիչները: Ես անկեղծորեն կուզենայի, որ այդպիսի հավաքներ հաճախակի անցկացնենք:

Չեզ բոլորիդ՝ առողջություն, լավատեսություն՝ ապրել, սովորեցնելու, արարելու, որպեսզի Արցախն ապրի: Իսկ մեր ապագան մեր ուժեղ, գրագետ, կրթված երիտասարդներն են:

ՆԿԻՐՅԱԼՆԵՐ

ԶՈՐԿԵՑ ԸՆՅՐԵՆԻՔԸ ՊԱՇՏՊԱՆՆԵԼԻՍ

2020 թվականի 44-օրյա պատերազմը իլեց հազարավոր կյանքեր: Հավերժի ճամփորդներ դարձան ոչ միայն զինվորականներն ու սպաներ, այլև տարբեր մասնագիտություն ունեցող մտավորականներ, արհեստավորներ, հասարակ մարդիկ, ովքեր իրենց կյանքը զոհեցին հայրենիքը պաշտպանելու: Անողորմ ու դաժան պատերազմը չխնայեց նույնիսկ մոր ծաղկող մարդկային կյանքեր, որոնք այդպես էլ մնացին չհայտնաբերված: Բազում ճակատագրեր խեղաթուրվեցին, հազարավոր նպատակներ մնացին անկատար: Իսկ մեր հերոսների հազարավոր հարազատներ մնացին կորստի դառը վշտի հետ, որը թեթևացնել կարող է միայն մեր նահատակների լուսավոր հիշատակը վառ պահելը, նրանց սխրագործությունը սերունդներին փոխանցելը:

«Լուսարար»-ը հետեւողական լինելով, թե ինչ է կատարվում մարզաշխարհում ու մեր մարզիկների կյանքում, նկատեց, որ բռնցքամարտի ԳԳ քառակի չեմպիոն, Եվրոպայի բրոնզե եւ արծաթե մեդալակիր, Աշխարհի երիտասարդների միջին առաջնության մասնակից Մանվել Պետրոսյանը սոցցանցում գրառման միջոցով հիշատակում է 44-օրյա պատերազմում զոհված՝ հոր կողմով եղբայր Արթուր ՍԱՐԳՍՅԱՆԻ ծննդյան օրը: Հայտնում ենք մեր զորակցությունը զոհվածի հարազատներին եւ անդրադառնում հերոսի կյանքին ու գործունեությանը:



ԱՐԹՈՒՐ ԶՈՎԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1995 թվականի մարտի 22-ին Մարտունու շրջանի Քերթ գյուղում: Ավարտել է Քերթի միջնակարգ դպրոցը՝ ուսման մեջ լինելով առաջադեմ: 2013-2015թթ. ծառայել է ԱՀ ՊԲ-ում՝ որպես պարտադիր ժամկետային զինծառայող: 2016թ. մասնակցել է ապրիլյան քառօրյա պատերազմին: Հայրենիքի հանդեպ իր պարտքը կատարելուց հետո ընդունվել է ԱրՊՀ կիրառական մաթեմատիկայի բաժինը: Համալսարանում ուսանելու ընթացքում սկսել է աշխատել իր մասնագիտությամբ: Աշխատել է Մաճկալաշեն եւ Շեխեր գյուղերի միջնակարգ դպրոցներում՝ որպես մաթեմատիկայի եւ ինֆորմատիկայի ուսուցիչ: Մասնավարժական գործունեության հետ համադրել է հաշվապահությունը: Կարմիր շուկայի արտադրամասում աշխատել է որպես հաշվապահ: Աշխատանքային հազեցած առօրյան չէր խանգարում, որ Կարմիր շուկայում տուն կառուցելու աշխատանքներ սկսի: Սակայն նրա տունը մինչև վերջ չկառուցվեց. մնաց կիսատ, ինչպես չիրականացված նպատակներն ու ջահել կյանքը...

Բռնցքամարտիկ Մանվել Պետրոսյանը եղբայրական սիրով շատ էր կապված Արթուրի հետ, որի մասին այսպես է պատմում. «Ինտելեկտուալ, մարդկային բարձր հատկանիշներով օժտված անձ էր Արթուրը: Հոգատար էր թե՛ մեծերի, թե՛ փոքրերի հանդեպ: Օգնում էր բոլորին: Ինձ խորհուրդներ էր տալիս որպես ավագ եղբայր: Ասում էր, որ սպորտի իմ ընտրած ուղին ճիշտ է, ու որ երբեք չթողնեմ այն: Մի անգամ երիտասարդներով ավտոմեքենայով տեղ էինք գնում, գյուղից մի քիչ հեռու էինք, երբ ավտոն խնդիրներ ունեցավ: Մնացել էինք ճանապարհին, մինչև օգնություն կգար: Այդ պահին Արթուրն անցնում էր իր ավտոյով, գալիս էր գյուղ: Նա դեռ չգիտեր, որ ես էլ եմ այդ մեքենայի մեջ: Պարզապես տեսավ, որ ավտոն անսարք է, մարդկանց օգնություն է պետք, մոտեցավ եւ օգնեց: Հետո տեսավ ինձ: Չէր կարողանում անտարբեր մնալ, երբ տեսնում էր, որ կարող է որեւէ բանով օգնել: Ազատ ժամանակ գրեթե չէր ունենում, շատ էր ծանրաբեռնված: Նշանված էր եւ շատ նպատակներ ուներ, որոնց իրականացման էր ձգտում... Բայց ծանրաբեռնված լինելով հանդերձ՝ հասցնում էր բոլորին օգնել, խորհուրդներ տալ, հատկապես ուշադիր էր ընտանիքի անդամների հանդեպ: Բազմազան ընտանիք են. ուներ չորս քույր եւ մեկ եղբայր, ինքը տան ավագն էր, հասցնում էր բոլորի հետ ժամանակ անցկացնել եւ փոքր քույրերին ու եղբորն ուղղորդել խորհուրդներով: Գյուղում հայտնի էր որպես նպատակալաց երիտասարդ եւ օրինակ գալիք սերնդի համար»:

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արթուր Սարգսյանը Կարմիր շուկայի ջոկատի կազմում՝ որպես զորահավաքային զինծառայող՝ գնաց Ջրական (Ջաբրայիլ): Մասնակցեց պաշտպանական մարտերին: Սեպտեմբերի 29-ին զոհվեց ականանետի պայթյունից Ջրականում:

Արթուր Սարգսյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Արթուր Սարգսյանի կերպարը գալիք սերնդի համար մնում է օրինակելի ոչ միայն որպես լավ մասնագետ ու հրաշալի անձնավորություն, այլև՝ անձնագիտության, հայրենամարտության ու խիզախության մարմնացում: Սերունդները պարտավոր են մեր հերոսների արժանի հետնորդները լինել եւ դա ապացուցել գործով թե՛ կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի ոլորտներում մեծ հաջողություն գրանցելով, թե՛ հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն ու հայրենամարտություն դրսևորելով:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԶԻՆՈՒՆԵԿ ՀԱՐՈՒԹԸ



Մեծ Հայքի Արցախի աշխարհի Վակունիք գավառի բնակավայրերից է Վակունիսը, որը 20-րդ դարասկզբին հայաթափ էր եղել ու բռնակցվել նորաստեղծ Ադրբեջան կոչվող հանրապետությանը: 1993թ. գարնանն ազատագրվեց Արցախը Մայր հայրենիքից անջատող մի ամբողջ հատված՝ Հակարի գետի վերին հոսանքի ամբողջությամբ: Նույն թվականի մարտի 31-ին ազատագրվեց նաև Վակունիսը: Ազատագրվեց Սիսական գնդի ջոկատներից մեկի հրամանատար Վուրգ Ոսկանյանի և իր 10 մարտիկների նահատակության գնով: 1994 թվականի գարնանից սկսվեց Քաշաթաղի շրջանի կազմավորումը և վերահայացումը: Վերահայացավ նաև Վակունիսը, որտեղ շուտով սկսեց գործել հանրակրթական դպրոցը, որը 2001 թվականից կոչվում էր Վուրգ Ոսկանյանի անունով: Այս փոքր կրթօջախում սովորում ու Վուրգի, նրա քաջերի ոգով էին դաստիարակվում վակունիսի աշակերտները: Դպրոցում շատ էր կարևորվում ռազմագիտություն առարկան՝ հաշվի առնելով, որ մեր

երկիրը մշտապես վտանգի մեջ է: 2016 թվականից այստեղ ռազմագիտություն առարկան դասավանդելու եկավ ստեփանակերտցի երիտասարդ լեյտենանտ Հարութ Ալեքսանդրի ՊԵՏՐՈՍՅԱՆԸ, որը սկսեց իր սաներին առավել մտերմացնել ռազմարվեստին: Հաճախ էր նրանց հետ այցի գնում գյուղի մուտքի մոտ սրբավայր դարձած հուշարձանին, որտեղ 1993թ. մարտի 31-ից մնացել էր Սիսական գնդի «ՈՒՐԱԼ» զինվորական մեքենան, որը վառվել էր թշնամու տանկից արձակված արկից: Այստեղ՝ նահատակ տղաների անուններով խաչքարի մոտ հաճախ էր արիության դաս անցկացնում:

Եղավ Արցախյան 44-օրյա պատերազմը, և Քաշաթաղի շրջանից շատերը կամավոր ու որպես պահեստազորային մեկնեցին առաջնագիծ: Պատերազմի մասնակից եղան նաև ժամկետային զինծառայողները: Սեպտեմբերի 27-ին Բերձորի զինկոմիսարիատի մոտ շատերն էին հավաքվել՝ պատրաստ մեկնելու առաջնագիծ: Պատերազմ գնաց նաև Հարութը:

Ծնվել է 1990թ. փետրվարի 6-ին Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում: Սովորել է տեղի հ. 5 միջնակարգ դպրոցում: 7 տարեկանից հաճախել է ըմբշամարտի պարապմունքների: Պատանի մարզիկների համար կարևոր են մրցումները և մրցանակով տուն վերադառնալը: Իսկ Հարութը գրեթե բոլոր մրցումներում էր ճանաչվում հաղթող-մրցանակակիր: Ծնողների և երկու քույրերի համար հպարտություն էր Հարութը, և նրա ամեն մի հաջողություն մարզաձևում, դպրոցում, հետազայում բանակում ու համալսարանում ուսանելիս շատ էր ուրա-

խացնում նրանց: Դպրոցն ավարտելուց հետո՝ 2007 թվականին ընդունվել է Արցախի պետական համալսարանի Նախնական զինվորական պատրաստության և ֆիզիկական դաստիարակության ֆակուլտետ (հեռակա): 2008 թվականին զորակոչվել է Հայոց բանակ: Ծառայել է «Արա Լեռ» իրետանային զորամասում: Ծառայության երկու տարիների ընթացքում զորամասի հրամանատարության կողմից ծնողներն ստացել են շնորհակալագրեր: Համալսարանում ուսումն



ավարտելուց հետո աշխատանքի է անցել Մարտունու շրջանի Նճի գյուղի դպրոցում՝ որպես Նճի ուսուցիչ: Ամուսնացել է Հադրութի շրջանի Տունի գյուղից Նունե Գրիգորյանի հետ, որն ավարտել է ԱրՊՀ բանասիրական բաժինը: 2016-ի օգոստոսին միասին տեղափոխվել են Քաշաթաղի շրջանի Վակունիս գյուղը, որտեղ կինը սկզբում աշխատում էր որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, իսկ 2019-ից՝ տնօրեն: Այդ ժամանակ

Քաշաթաղի շրջափակազմի «Մերան» պաշտոնաթերթի խմբագիրն էր և աշխատանքի բերումով լինում էր նաև Վակունիսում: Դպրոցում հաճախ էին կազմակերպվում տարբեր միջոցառումներ՝ հիմնականում ռազմամարզական: Հարութն էլ իր տեղն ուներ այդ միջոցառումների ժամանակ՝ կազմակերպիչների, մասնակիցների հետ: Երիտասարդ զինվորներն իր սաների համար ընկեր էր և ուսուցիչ, խորհրդատու զինվորական: Սակայն եղավ պատերազմ, և ամեն ինչ փոխվեց: Պատերազմի առաջին օրից մինչև նոյեմբերի 9-ը Հարութը մարտադաշտում էր, եղել է դասակի հրամանատար ու իր զինվորների հետ հերոսաբար մարտնչում էր՝ մեծ վնաս հասցնելով թշնամուն: 2020թ. նոյեմբերի 9-ին կնքվեց հրադադար, սակայն նույն օրը Մարտունու շրջանում հերոսաբար նահատակվեց Հարութը՝ հավերժ մնալով Վակունիսի դպրոցի զինվորի և Հայոց բանակի սպա: Կինը՝ Նունեն, պատմում է, որ մշտապես կապի մեջ են եղել: Վերջին անգամ զանգել է նոյեմբերի 8-ի երեկոյան: «Շատ տխուր էր: Վերջին բանը, որ ասաց. «Ոչ մի բանից չեմ վախենում, մենակ վախենում եմ ձեզ էլ չտեսնեմ...», ու կապը ընդհատվեց»,- ասաց Նունեն:

Հուղարկվողված է Եռաբլուրում: Հետմահու պարգևատրվել է «Արիություն» մեդալով և «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

Այդ օրը՝ նոյեմբերի 9-ին, Մարտունիում նահատակվեց նաև բերձորցի՝ Հայոց բանակի փոխգնդապետ Վահագն Բաբայանը:

2020թ. 44-օրյա պատերազմում զոհվեց նաև Հարութի սաներից 18-

ամյա Ժիրայր Գագիկի Մարգարյանը, որը վեց քույրերի միակ եղբայրն էր ու ավագը: Միասին հաճախ էին այցելում Վուրգի և իր զինվորների նահատակության վայրը, ոգեշնչվում նրանց հերոսությամբ: Հարութի կինն ու փոքր որդին՝ Ալեքսանդրը, որը կրում էր 2018-ին մահացած պապի անունը, սկզբում Վակունիսում էին, հետո տեղափոխվեցին Երևան ու այժմ էլ բնակվում են այնտեղ:

Հարութի մասին՝ որպես զինվորի ու լավ հայ, գովեստով, սիրով ու ցավով են խոսում Քաշաթաղի շրջափակազմի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը և Նճի գնդի տեսուչ Արին-Վուրյա Գալստյանը:

Նշեն, որ Քաշաթաղի շրջանից 44-օրյա պատերազմում նահատակվել են նաև Ուռեկանի, Փակահանի դպրոցների զինվորներ Վուրգ Հարայի Սիմոնյանը (ծնվ. 1990թ.), Սուրեն Աշոտի Հովհաննիսյանը (ծնվ. 1974թ.), Վուրգավանի դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ, ծյուրոփստ Աշոտ Արայի Կոստանյանը (ծնվ. 1990թ.):

Մինչ օրս անհայտ կորած են համարվում Հակարի և Հակ գյուղերի դպրոցների տնօրեններ Արսեն Անդրանիկի Հայրապետյանը (1991թ.) և Յուրիկ Սոսիկի Պողոսյանը (1972թ.): Ընդհանրապես Քաշաթաղի շրջանից Արցախյան 44-օրյա պատերազմում զոհվեցին 70-ից ավելի քաջորդներ, կան անհայտ կորածներ: Առավել ցավալի է նաև, որ կրկին թշնամու տիրապետության տակ անցան հայոց տարածքները՝ Վակունիսն ու Վուրգավանը, Ուռեկանն ու Արա լեռը, Հակարին ու Հակը...

Զոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

ԱՐՅԱՆՆ ԿՊՐՈՒՄ Է՝ ԱՍՏՈՒ ՓԵՆՇ ԲՈՒՆԱԾ

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՄԵՐԳ

Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցում ապրիլի 3-ին կազմակերպված միջոցառման մասին ֆեյսբուքյան իր գրառումը այսպես է վերնագրել դպրոցի փոխտնօրեն Ալինա Բաղդասարյանը: Միջոցառմանը, որը կազմակերպել էր նախադպրոցական «Ժպիտ» խմբի դաստիարակ Ջոյա Ավագիմյանը՝ նվիրված Ծաղկազարդի տոնին, ներկա էին ԱԶ ԿԳՄՍ նախարարության և Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի պատասխանատուներ, դպրոցի տնօրինությունը, մանկավարժական կոլեկտիվի անդամներ, հյուրեր:

Փոքրիկներն, իրոք, ժպիտ, հույս ու հավատ պարզեցրին ներկայից: Բոլորը հիացած էին նրանց պահվածքով, հանդերձներով, ամենակարևորը՝ կատարումներով: Նրանք ասես Աստուծո հրեշտակներ լինեին:

Դահլիճը կահավորված էր ճաշակով, տոնին համահունչ երանգներով, բազմապիսի ծաղիկներով: Ամեն մանուկ կարծես այդ ծաղիկների մի մասնիկն էր: Նրանք արտասանեցին բանաստեղծություններ ու իմաստալից քառյակներ՝ համեմված երգ ու պարով: Հաճելի էր նախադպրոցական խմբի սաների շուրթերից լսել մեր մաքուր, զեղեցիկ հայերենը: Ջոյա Ավագիմյանը դաստիարակի իր հարուստ փորձով կարողացել է սովորական թվացող այս ցերեկույթը վերածել տոնի՝ երեխաների հոգուն, սրտին ու գիտակցությանը հասցնելով Ծաղկազարդի իմաստն ու նշանակությունը:

Բոլորը հիացած էին դաստիարակի հետաքրքիր մտահղացումներով ու ոգևորված՝ երեխաների ելույթներով: Իսկ վերջում այն ավելի հուզառատ

դարձավ, երբ ծնողները միացան «Քոչարի» պարող իրենց զավակներին:

Միջոցառումը նաև հայրենապաշտության քարոզ էր: Մինչ դպրոցում ելույթ ունենալը երեխաները, հայկական նախազարդերով վերնաշապիկներ հագած, դասվարի հետ այցելել էին «Մենք ենք մեր սարերը» կոթողը, այնուհետև՝ Ստեփանակերտի Սուրբ Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցի՝ օրհնություն ստանալու և իրենց աղոթքներն առ Աստված հղելու:

Մանուկները խաղաղություն են աղերսում, խնդրում են բացել կյանքի ճանապարհը, անհոգ մանկություն են ուզում, ինչպես Արցախի բոլոր երեխաները:



Օրվա խորհուրդն ապրեցնող ու պարտավորեցնող է. հայը եղել է, կա ու լինելու է:

Դպրոցում կազմակերպված միջոցառմանը ներկա էր Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Մինաս քահանան, որն իր օրհնության խոսքում հույս, հավատ, սեր,

գործություն մաղթեց Արցախ աշխարհի մանուկներին ու ժողովրդին, հայրենիքին և քրիստոնեական արժեքներին հավատարիմ լինելու պատգամ: Ասաց, որ Ծաղկազարդին հաջորդում է Հարչարանաց շաբաթը, որը Սեր տեր Հիսուս Քրիս-



տոսի խաչի ճանապարհն է: Նա տեսավ անարդարություններ, մատնություն, անարգանք, բայց տարավ իր խաչը և ի վերջո հաղթեց մահվանը՝ հարություն առնելով: Սեր ազգը նույնպես,



առավելապես՝ Արցախը, այսօր կրում են նույն չարչարանքները հանուն արդարության: Պետք է տոկալ և հավատալ, որ ի վերջո այն կգա:

Միջոցառմանը ներկա էր ԱԶ նախագահի խորհրդական Լուսինե Դարախանյանը, որն իր տպավորությունը հայտնեց.

«Պայքարելու կամքը. այսպիսին էր Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի «Ժպիտ» խմբի սաների՝ Ծաղկազարդի տոնի խորհրդին նվիրված այսօրվա ուղերձը: Քրիստոնեական արժեքներով է ձևավորվում ճիշտ մարդ համակարգը: Երեխաների հորդորն էր մեր լավ մտքերով ու բարի գործերով ծաղկելը: Մարդը կարող է ծաղկել միմիայն սեր ու հոգատարություն տարածելով, լավ ու բարի գործերով և խիզախելով:

Երբ Քրիստոսը մտավ Երուսաղեմ, խառնակ ժամանակներ էին նրա շուրջը, որպեսզի գան մեկ մտքի: Ես շատ նմանեցնում եմ Քրիստոսի մուտքը Երուսաղեմ և մեր օրերը: Քրիստոսը գիտեր, որ իրեն խաչելու են, և հետո գալու է Նոր Սկիզբ: Մենք էլ բոլորս պետք է մի կողմ թողնենք մեր ամբիջիները, մեկտեղվենք ամենաբարձր գաղափարի շուրջ: Ծաղկազարդն ունի նաև կենաց ծառի խորհուրդ, որը նշանակում է, որ մենք հաճախակի պետք է խորանուխ լինենք մեր արմատների մեջ, կառուցենք մեր ճիշտ ընթացքը, որպեսզի տեսալի ապագայի տեսլականը հեռու չլինի»:

Անահիտ ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի գլխավոր մասնագետ

ԱԶ ԿԳՄՍ նախարարությունը նախաձեռնել է պետական համայնքների մասնակցությամբ համերգների շարք՝ նվիրված Արցախյան շարժման 35-րդ տարեդարձին: Մեկնարկը տրվեց մարտի 31-ին: Ազգային նվագարանների պետական նվագախումբը և «Մենք ենք մեր սարերը» ազգագրական երգի-պարի համույթը հանդես եկան համատեղ համերգով: Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատի դահլիճը լեվելեցուն էր: Այո, մեր ժողովուրդն այսօր հոգեպես ճնշված է



և հաղթանակի բարձունքից չի խոսում, բայց արցախյան ֆենոմենը չի փոխվել: Պետք է կարողանալ առերեսվել մեր սխալների, բացթողումների հետ, հաղորդակից լինել 88-ի ոգուն, և թույլ չտանք հատել հուսահատության եզրագիծը: Թշնամին նույնն է, ձեռագիրը՝ նույնը, ուրեմն՝ մենք էլ պետք է դառնանք նույնը մեր հաստատակամությամբ ու կենսունակությամբ:

Ազգային նվագարանների գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Լևոն Մարդարյանն ասաց, որ նվագախումբը ոչ լրիվ կազմով է հանդես գալիս: Հինգ երաժիշտ, որ Երևանում են, շրջափակման պատճառով չեն կարողացել ներկայանալ. նվագախմբում թառեր չկան, քամանչա, բայց օգնության է հասել կամերային նվագախմբի ջութակահարը, և համերգը կայացվում է: Համույթը հիմնականում հանդես եկավ նվագախմբային ստեղծագործություններով, իսկ «Մենք ենք մեր սարերը» ապահովեց երգային մասը:

Հանդիսատեսը վայելեց հայ սիրված գուսանների ու կոմպոզիտորների զեղեցիկ, հայրենասիրական և ժողովրդական ստեղծագործությունները:

Համերգները կշարունակվեն: Երաժշտությունը կյանքի բոլոր հանգրվաններում մեզ օգնում է ապրել ու ստեղծագործել:

Սեփ. լրատվություն

ՀԱՄԱՆԱԲՈՒԻԼ ԱՐՑԱՊԱՆԱՆՅՈՒԹԵԱՆ ՅՈՒՐՋ

Արցախեան ճգնաժամին խորացումը, արցախահայրության դեռ ավելի քան 105 օր է վեր շարունակվող շրջափակումը, նույնիսկ Արդադատության միջազգային դատարանի 2023 փետրուար 22 թուակիր վճիռն ու անոր հետևած միջազգային այլ ատեաններու որոշումներուն արհամարհումը, անգամ մը եւս, թերեւս ավելորդ անգամ, կը հաստատեն ինն ճշմարտութիւնը, թէ ուժի իրաւունքն է, եւ ոչ իրաւունքի ուժը, որ տիրող կը մնայ աշխարհի վրայ: Անորպէսն թուրքիոյ հետ, աջակցութեամբ Իսրայէլի, Փաքիստանի, Ուքրանիոյ, ինչպէս նաեւ երեւելի եւ աներեւոյթ այլ ուժերու, 44-օրեայ պատերազմին, օգտուելով հայոց բանակի անպատրաստ վիճակէն, ինչպէս նաեւ ներքին դաւադրութիւններէն՝ պարտութեան մատնեց մեր երկիրը եւ այժմ, արդէն շուրջ երեք տարի, կը սպառնայ, միշտ ուժի իրաւունքով, ոչնչացնել առաջին հերթին Արցախի մնացորդացը, ապա ամբողջ Հայաստանը որպէս պետութիւն եւ ազգային հաւաքակառուցութիւն:

Ի՞նչ կընենք մենք, որպէս պետութիւն ու որպէս ազգային հաւաքակառուցութիւն՝ հայրենաբնակ թէ սփիւռքացեալ: Զօրաշարժի կենթարկե՞նք մեր ներքին ուժերը, ի մի կը բերե՞նք մեր կարողութիւնները, փոքր կամ մեծ, երբեմն կազմակերպ, ավելի հաճախ տարտղնուած մեր «ազդեցութեան գոտիները», մտային ու նիւթական կարողութիւնները: Դժբախտաբար՝ ոչ:

Նման պարագաներուն, շատ բնականօրէն,

մեր հայեացքը կուղղենք դէպի հայոց պետական իշխանութիւն, անկէ ակնկալելով համընդհանուր զօրաշարժի ազդանշան, ուժերու եւ ջանքերու համակարգում, առաջնորդութիւն: Ի գուր, կրկին դժբախտաբար: Մեր երկրի ներկայ իշխանութիւնները ոչ միայն ի վիճակի չեն, այլեւ համաձայն չեն այդպիսի նախաձեռնութիւններու: Անոնք կը գտնուին «խաղաղութեան դարաշրջան» ստեղծելու երազախաբութեան մէջ: Անոնց մեծ մասը այժմ եւ միշտ կը գտնուին ու պիտի գտնուին սեփական իշխանութիւնը պահպանելու եւ իշխանութեան միջոցով սեփական բարեկեցութիւնը ապահովելու մարմաջի մէջ: Վկայ՝ Human Rights Watch-ի մեզի համար ամօթալի զեկոյցները Հայաստանի մէջ տիրող համակարգային կաշառակերութեան (corruption) եւ ազատութիւններու սահմանափակութեան մասին: Եւ ասիկա այն պայմաններու տակ, երբ իրենք՝ իշխանաւորները, առաջին հերթին՝ բարձրագոյն իշխանաւորը, կը պնդեն ցեղասպանութեան եւ ռազմական ներխուժման անմիջական վտանգի մասին՝ չեն գիտեր ժողովուրդը վախցնելով Ատրպէյճանին անձնատուր ըլլալու փաստաթուղթ ստորագրելու, թէ՛ Արցախը ամբողջութեամբ եւ Զանգեզուրն ալ միասին զիջելու նպատակով: Անշուշտ, այդ պնդումները անհիմն չեն, բայց անընդունելի են այդ վտանգները համազգային ուժերով չբխմակայելու, չբխմարդելու տարանորոշութիւնն ու ոգին:

Օրհասական այս պահուն ազգային ուրիշ ի՞նչ ուժ կարելի է կառչիլ: Խորհրդարանա-

կան ընդդիմութեան: Դժբախտաբար՝ ոչ: Ազգային ժողովին մէջ սովորաբար մեկուսի գործող, խորհրդարանական դոյզն համախոհութիւն ստեղծելու անատակ ընդդիմութիւնը, գէթ ներկայ իր վիճակին մէջ, աւա՛ղ, չի կրնար երաշխիք դառնալ Արցախի փրկութեան, արցախահայրութեան ապահով եւ ազատ ապրելու ձգտումներու իրականացման: Առաւելագոյնը զոր կրնար ընել ընդդիմութիւնը՝ արցախահայրութեան պորտալարը՝ Բերձորի (Լաչինի) միջանցքը զոց պահելու ատրպէյճանական քաղաքականութեան դէմ խորհրդարանական յայտարարութեան նախաձեռնութիւնն էր, որ տապալեցաւ «Քաղաքացիական պայմանագիր» կոչեցեալ մեծամասնութեան կողմէ:

Ուրիշ ո՞վ կամ ո՞վքեր կարող են դառնալ համահայկական հուժկու նախաձեռնութիւն ստեղծելու կռուան. մեր ավանդական կուսակցութիւնները: Իցիկ թէ: Անոնցմէ ամենակազմակերպ կառույցը՝ ՀՀԴԿ-նակցութիւնը, հակառակ Հայ դատի գրասենեակներու օգտակար գործունեութեան, կորսնցուցած կը թուի ըլլալ իր կեդրոնը: Հի՛ն հիւանդութիւն՝ «Արեւելեան» եւ «Արեւմտեան» քիւռօներ: Մինչ ՍԴՀԶակեան կուսակցութիւնը կը թուի կորսնցուցած ըլլալ իր գոյութեան իմաստաւորումը: Իսկ ինչ կը վերաբերի իմ կուսակցութեան՝ ՈԱԿ-ին, տեւական ժամանակ է, որ անկա առեւանգուած կը մնայ մի քանի անձերու կողմէ, որոնք ուրիշ բան չեն գիտեր ընել, եթէ ոչ՝ զբաղիլ իրենց փառասիրական գիշտութեամբ...

Կը մնայ համազգային մեր մեծագոյն կառույ-

ցը՝ Հայ Առաքելական եկեղեցին, որ օրերս, Արցախի շրջափակումի 100-րդ օրուան առթիւ, Վեհափառ Հայրապետի եւ Հոգեւոր Գերագոյն խորհուրդի անունով հրապարակեց Միջազգային դատարանին որոշումը արհամարհելու, միջազգային դատական ատեաններու վճիռները կոպտօրէն շրջանցելու Ատրպէյճանի ընթացքը դատապարտող, որուն մէջ, սակայն, չկար հակազդեցիկ գործողութեան որեւէ նախաձեռնութիւն: Մինչդէռ Մայր աթոռը կրնայ, Մեծի տանն Կիլիկիոյ աթոռին, ինչպէս նաեւ յարանուանական մեր միւս եկեղեցիներուն հետ կեդրոնաձիգ կառոյցը դառնալ համազգային քաղաքական, քարոզչական, մտաւորական ու տնտեսական համահայկական ներուժը համախմբելու, հաւաքաբար եւ համախոհութեամբ գործնական աշխատանքային ծրագիրներ եւ համապատասխան որոշումներ կայացնելու համար:

Օրհասական այս վիճակին մէջ, զարմանալի եւ արտակարգ, մեզի համար գոյատեւման պայքարի, համահայկական դիմադրողականութեան օրինակ եւ կռուան կը մնայ արցախահայրութիւնը, անոր ջրնկնուելու, իր հողին ու ջուրին կառչած մնալու կամքը: Այդ կամքը կրնայ փրկել ամբողջ Հայաստանը, մեր պետականութիւնը, ազգի լինելիութիւնը:

Պէտք է բոլորովին արցախահայրութեան շուրջ: Ուժեղացնենք զայն եւ ուժեղանանք անով: Ուրիշ ելք չկայ:

ՄԱՐԶԱԿԱՆ

«ԶՈՒՄԲԱՆ ԻՆՁ ՍՈՎՈՐԵՅՐԵՅ ԼԻՆԵԼ ԻՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏԱՐԲԵՐԱԿՆ ԱՄԵՆ ՕՐ»



Կինը համարվում է սիրո և ջերմության, հոգատարության, ստեղծագործ մտքի և հնարանտուքային խորհրդանիշը: Լիարժեք լինելու համար կինը պետք է ունենա հավասարակշռություն, հոգու ներդաշնակություն: Ինչպե՞ս են հաղթահարվում կնոջ կյանքում առաջացող դժվարությունները, եւ հե՞շտ է, արդյոք, համապատասխանել կին լինելու վեհ կոչմանը:

Մայրության և գեղեցկության տոնին ընդառաջ հյուրընկալեցինք մարզիչ Լաուրա Մնացականյանին, որը ձգտում է կատարելագործման իր կյանքի բոլոր ոլորտներում և գտել է ներդաշնակ լինելու իր միջոցը, որն այն առաջնորդ ուժն է, ինչի կարիքն ունեն հավանաբար շատ կանայք:

Ծնվել է 1987թ. հունիսի 2-ին Ստեփանակերտում: Ստացել է մեներջմենթի մասնագիտություն: Աշխատում է «Արցախագագ» ՓԲԸ-ում՝ որպես ներտնային ցանցի սպասարկման ծառայության մասնագետ: Տարիներ առաջ հաճախելով Արցախում նորարար գումբա-ֆիթնեսի պարապմունքներին՝ սկսեց ավելի

խորն ուսումնասիրել զումբան ու նաեւ մարզչական գործունեություն ծավալել: Անցնելով համապատասխան դասընթացներ՝ Լաուրա Մնացականյանը դարձավ BASIC-1 (հիմնական բազա) զումբայի մարզիչ: Ստացել է նաեւ ֆիթնեսի մարզչի վկայական: Տիրապետում է դիետոլոգիայի և սննդաբանության հիմնականներին, կատարում է խորհրդատվություն: Աշակերտներ մարզելու զուգահեռ շարունակում է գարգանավ զումբա-ֆիթնեսի մարզչական գիտելիքներ ստանալու ուղղությամբ: Ամուսնացած է, ունի երկու որդի:

- Լաուրա, ինչպե՞ս է ստացվում հաջողության հասնել աշխատանքի և մարզչական գործունեության բնագավառներում, միաժամանակ զբաղվել ընտանիքի հոգսերով, դաստիարակել որդիներ և միշտ լինել մարզչական լավ վիճակում ու հմայիչ:

- Ինձ համար շատ հաճելի է լսել նման խոսքեր: Դա եւս մեկ անգամ ապացուցում է, որ այն աշխատանքը, ինչ կատարել են ու շարունակում են կատարել ինձ վրա, տալիս է ցանկալի արդյունք: Կարծում եմ, որ յուրաքանչյուր մարդու համար, առավելապես՝ կնոջ, ամենագլխավորը կյանքի բոլոր ոլորտներում կայանալն է, մշտապես աշխատելն ինքն իր վրա ու կատարելության ձգտելը: Շատ կարեւոր է, որ կինը ներդաշնակ լինի, հանգիստ ու լավատես: Այդ հատկություններն ունենալով թերեւս հնարավոր է հասնել նպատակների:

- Երջանիկ լինելու համար առաջնորդվո՞ւմ եք որեւէ բանաձեւով: Կա՞ երջանկության գաղտնիք:

- Երջանկությունը չունի ընդհանուր բանաձեւ կամ գաղտնիք: Յուրաքանչյուրն ունի իր, այսպես ասած, «Ռուբիկի խորանարդը», որը ճիշտ հավաքելու համար որոշակի աշխատանք պետք է կատարել: Մի քանի տարի առաջ իմ հարազատների կյանքում ցավալի իրադարձություններ տեղի ունեցան, որը բացասական ազդեցություն ունեցավ նաեւ ինձ վրա: Մինչդեռ դժբախտ պատահարի ու կորստի վշտի հաղթահարման ճանապարհին փոխվեց գիտակցումս, վերանայվեց արժեքստանդարտս: Ես հասկացա, որ եթե ապրելու հնարավորություն ունես, ուրեմն պետք է ձգտես երջանիկ լինել: Ծանր հոգեվիճակից դուրս գալու համար ինձ օգնեց իմ սիրած զբաղմունքը՝ զումբան, որը դարձավ նաեւ աշխատանք ինձ համար:



- Ի՞նչ դեր ու նշանակություն ունի զումբան Ձեր կյանքում:

- Տարիներ առաջ բժիշկներն ախտորոշեցին, որ ինձ մոտ առկա է մկանային խնդիր՝ առաջացած ոչ ճիշտ ֆիզիկական ծանրաբեռնվածության պատճառով: Ինձ պետք էր այնպիսի զբաղմունք, որը կտար եւ ակտիվ ու ճիշտ ֆիզիկական դաստիարակություն, եւ հաճելի ու դրական լիցքեր: Ստեփանակերտում փնտրեցի տարբերակներ ու գտա զումբան: Դա նորոյթ էր ինձ համար, բայց եւ շատ գրավիչ էր հատկապես պարային տարրեր ներառված լինելու առումով: Պարը միշտ սիրելի է: Շատ ուրախացա, որ գտա երկու կարեւոր տարրեր՝ պարը եւ սպորտը, իրար միացնող դասընթացներ, որը բուժիչ ազդեցություն ունեցավ ինձ վրա, պարզեցեց այն դրական հույզերը, որի կարիքն ունենք բոլորս: Ձումբան օգնեց ինձ վերականգնվել թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես: Շուտով եկավ դա դասավանդելու որոշումս, որի համար էլ սկսեցի օժնայն դա-

տընթացների մասնակցել եւ հմտանալ մարզչական մասնագիտության մեջ: Ձումբա-ֆիթնեսն ինձ սովորեցրեց իմ լավագույն տարբերակը լինել ամեն օր:

- Ընտանիքում ինչպե՞ս են վերաբերվում Ձեր հորքի-աշխատանքին:

- Ցանկացած ոլորտում առաջընթաց ունենալու համար կարեւոր է հարազատների, մտերիմների բարոյական աջակցությունը: Ամուսինս ու որդիներս դրական են վերաբերվում մարզիչ լինելու իմ ընտրությանը եւ օգնում են ինձ, որի համար ուրախ եմ ու շնորհակալ: Խմբում մարզումներս անցկացնելու համար անհրաժեշտ էր բարձր հնչողությամբ դիմամիկներ ձեռք բերել, որպեսզի մարզադահլիճում ապահովվի բարձր որակյալ երաժշտություն: Ամուսինս սատարեց ու ֆինանսական կողմը վերցրեց իր վրա: Որդիներս ընթանումով են վերաբերվում իմ աշխատանքին եւ հասկանում են, որ տանը պետք է պարապեմ, անշուշտ, երաժշտության ներքո: Շատ դեպքերում կրում են ականջակալներ, որպեսզի իմ երաժշտության ձայնը չխանգարի նրանց: Իսկ ընդհանրապես, զումբան բարենպաստ է ազդում նաեւ դրանով պարապող մարդկանց միջանձնային հարաբերությունների կարգավորմանը, շփման բարելավմանը: Սեփական օրինակով կարող եմ ասել, որ զումբան դարձնում է ավելի ազատ ու անկաշկանդ, ինչն էլ իր խմբագրումներն է մտցնում թե՛ աշխատանքի, թե՛ ընկերների, թե՛ ընտանիքի անդամների ու երեխաների հետ շփվելու բնագավառում:

- Կարո՞ղ եք պատմել զումբայի մասին: Ովքե՞ր կարող են հաճախել պարապմունքներին:

- Ձումբան սրընթաց ներխուժեց ֆիթնեսարդյունաբերության մեջ եւ արագորեն գրավեց իր հետնորդներին: Պարապմունքներն այնքան են դուր գալիս աշակերտներին, որ նրանք պատրաստ են ժամերով կրկնել ոչ այնքան դժվար վարժությունները լատիմասներին կամ դիմամիկ ռիթմի ներքո: Ձարմանալի չէ, որ զումբան դարձել է միահարելու ամենարդիական ծրագրերից մեկը: Ձումբա-ֆիթնեսը լավագույն դեղամիջոց է սթրեսի դեմ, որն օգնում է դառնալ ավելի վստահ, լավատես ու ազատ բարոյություններից: Ձումբայի առանձնահատկություններից է պարզ լինելը: Նկատի ունեն, որ այն մարդիկ, ովքեր չունեն պարային հմտություններ կամ ֆիզիկական պատրաստություն, հեշտությամբ կարող են միանալ դասերին: Ձումբան այնպես է մշակված, որ բոլոր հիմնային քայլերն ու վարժությունները բացարձակապես հեշտ են ու պարզ կրկնելու համար: Իսկ երբ մարզիչը տեսնում է, որ աշակերտներն արդեն առաջընթաց ունեն, ավելացնում է նոր շարժումներ, կոմբինացիաներ: Դեռ զա էլ այն բանալից է, որի միջոցով մարդիկ իրենց մարմնի վրա նկատում են փոփոխություններ, բայց չեն զգում որեւէ լարվածություն, որովհետեւ գտնվում են երեկույթի եւ ուրախության մթնոլորտում: Դա, այսպես ասած, քողարկված մարզանք է, ուր մարդիկ այցելում են մեծ հաճույքով:

- Իսկ զումբան ունի՞ փոխտիպայություն, օրինակ՝ ինչպես յոգան:

- Ձումբայի փոխտիպայությունն այն է, որ կենսակերպ է, վառ է, աշխույժ, հասարակ եւ արդյունավետ: Հաճախորդներին հաճախ ասում եմ, որ եթե զումբա-ֆիթնեսը բարդացնենք ու վերածենք պարի դասի, ապա ծրագիրը կկորցնի իր հիմնական իմաստը: Ձումբան ներառում է շարժումների ազատություն եւ այնպես շարժվելու հնարավորություն, ինչպես դա հատուկ է մարդկանց, ոչ թե այնպես, ինչպես նախագրված է: Այստեղ չկա ճիշտ կամ սխալ, մինչդեռ կան «գերազանց է», «հոյակապ է», «ես շարժվում եմ ու հաճույք ստանում» արտահայտումները: Ի դեպ, զումբան հենց այդպես է թարգմանվում: Իհարկե, այդ ամենը փորձառու մարզչի վերահսկողությամբ է կատարվում:

- Ի՞նչ հատկություններ պետք է ունենա զումբայի մարզիչը:

- Պետք է կարողանա համապատասխանել արդի պահանջներին, զարմացնել, հետաքրքրել ու անընդհատ թարմացնել մատուցվելիքը: Տվյալ շարժումը կամ վարժությունը պետք է կարողանաս նախ ինքդ իդեալական կատարել, հետո պահանջես: Իսկ լավ սովորեցնելու համար պետք է ինքդ անընդհատ սովորես: Մարզչի սովորելը երբեք կանգ չի առնում: Պետք է մեծ համբերություն եւ տակտ ունենալ յուրաքանչյուր հաճախորդի հետ աշխատելու համար. բոլորի պահանջները միանման չեն, պետք է աշխատել բոլորին բավարարել: Իր հերթին սննդաբանության եւ դիետոլոգիայի բնագավառներում գիտելիքներ են ստացել եւ սննդակարգի հետ կապված խորհուրդներ են տալիս, քանի որ ֆիթնեսն ու սննդակարգը սերտորեն կապված են իրար հետ: Ինձանից կախվածն անում եմ, որ ունենանք կայացած կոլեկտիվ, փորձում են ուղղորդել յուրաքանչյուր ինքնորի՝ կոլեկտիվում ինքնադրսեւորվելու համար:

- Ի՞նչ երազանքներ ու նպատակներ ունեք:

- Ունեն Ստեփանակերտի կենտրոնում սեփական ֆիթնես-կենտրոն բացելու մտահղացում: Սիրում եմ մարզելը, ուզում եմ մկրվել սիրած գործին: Որդիներս լավ ապագայի մասին են երազում, իմ ամուսնու հետ միասին նպատակադրվել են նրանց հասցնել այն կենտրոն, որտեղից կկարողանան ինքնուրույն ապրել եւ կայանալ: Սակայն իմ բոլոր երազանքներն ու նպատակները բխում են մեկ ընդհանուր երազանքի կատարվելուց, որը Արցախում խաղաղություն, ազատություն ու անկախություն ունենան է:

Շնորհավորում են բոլոր մայրերին, քույրերին, կանանց ու աղջիկներին զարմանալի գեղեցիկ տոնի առթիվ: Որդեկորույս մայրերին ցանկանում եմ ուժ եւ համբերություն: Սիրելի՛ կանայք ու աղջիկներ, սիրով հրավիրում եմ զումբայի դասերի, որոնք անց ենք կացնում Շառլ Ազնաւուրի անվան մշակույթի կենտրոնում շաբաթական երեք-չորս անգամ: Միասին ձգտենք լինել առողջ, գեղեցիկ ու երջանիկ:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ ԳՈՐԾԵԼՈՒ Է ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՅՎԱԾ ՄԱՐԶԱԴԱՂՆԻՃ

Ստեփանակերտում բացվեց Արցախի ծանրամարտի ասոցիացիայի վերանորոգված մարզադահլիճը: Ասոցիացիային հատկացված մասնագիտացված մարզադահլիճը մարզիչներին ու մարզիկներին թույլ կտա ավելի կոփվել, ամրանալ եւ մրցաշարերում պատվով ներկայացնել Արցախի ոգին ու կամքը:

Ծանրամարտի ասոցիացիայի նախագահ Արթուր Շիրինյանն ասաց, որ մարզադահլիճը վերանորոգվել է պետական միջոցներով, քաղաքաշինության նախարարության օժանդակությամբ: Երախտագիտության խոսք հղվեց նախագահ Արայիկ Հարությունյանին մարզադահլիճի վերանորոգումն այս դժվարին ժամանակահատվածում իրագործելու համար: Անհրաժեշտ մարզասարքերն ու մարզադահլիճի կահավորումը կատարվել է ասոցիացի-



այի կողմից: Գույքային հագեցվածությունը մոտ 80 տոկոս է, այսինքն՝ մարզումներն անխոչընդոտ կարողանում են իրականացնել:

Նոր վերանորոգված մարզադահլիճը՝ համալրված ամհրաժեշտ սարքավորումներով ու մրցադահլիճներով, չի գիշում միջազգային չափորոշիչներին համապատասխանող ծանրամարտի մարզադահլիճներին: Այն ծառայելու է ծանրամարտիկների մարզումները պատշաճ կազմակերպելուն եւ, իհարկե, իր դրներն է բացելու ծանրամարտի սիրահարներին համար:

Արցախի ծանրամարտի ասոցիացիան հիմնադրվել է 2017 թվականին: Այն մշտապես մասնակցում է մարզական առաջնությունների եւ միշտ գրանցում է ոգեւորիչ արդյունքներ: Ծանրամարտիկների մեջ կան բրոնզե, արծաթե եւ ոսկե մեդալակիրներ ԳԳ-ում կազմակերպված մրցաշարերից ու առաջնություններից: Ասոցիացիան կազմակերպել է մի շարք մրցաշարեր: Հիշարժան են 2018 եւ

2019 թվականների մրցաշարերը, երբ Արցախը հյուրընկալել էր 117 մարզիկների, ինչպես նաեւ 284 մարզիկների մասնակցությամբ մրցաշար անցկացրել: Սկսած 2019 թվականից՝ ասոցիացիան լավ արդյունք է արձանագրել ԳԳ-ում կազմակերպվող մրցաշարերում:

Խորհրդանշական կարմիր ծապավենը կտրելու արարողությունը վստահվել էր ծանրամարտի մարզիկներ՝ Հայաստանի չեմպիոն Էլինա Նազարյանին ու Արցախի չեմպիոն Յուլյա Շիրինյանին:

Նոր հիմնանորոգված մասնագիտացված մարզադահլիճը խթան կհանդիսանա ծանրամարտ մարզածելի շուրջ նոր մարզիկների համախմբման գործում: Արցախը պետք է անպարտելի դառնա ամուր ու նպատակասլաց սերնդով:

Ս. ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի «27» մարտի 2023թ. թիվ 9 որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ Արցախի ներդրումային հիմնադրամի 2022թ. գործունեության մասին

- 1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ Արցախի ներդրումային հիմնադրամ
1.1 Գրանցման համարը՝ 443.160.11309
1.2 Գրանցման ամսաթիվը՝ 01.11.2007թ.
1.3 Գտնվելու վայրի հասցեն՝ ք. Ստեփանակերտ, Ս.Մեծի 37/22
1.4 Հեռախոս՝ /+37447/ 975511

2. Հիմնադրի անվանումը՝ ԱՀ կառավարություն

3. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝ Սևակ Հարությունյան

4. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝ Արայիկ Հարությունյան, Վահրամ Բաղդասարյան, Արմեն Թովմասյան, Բենիկ Բախչիյան, Մանվել Բաբաջանյան

5. Աշխատակազմը՝ Աշխատակազմում ընդգրկված անձանց ընդհանուր քանակը 31.12.2022թ. դրությամբ կազմել է 55 հոգի, իսկ 2022թ. աշխատակազմին հատկացված աշխատավարձի ընդհանուր գումարը՝ 234,684.4 հազար դրամ (ներառյալ հարկերը և պարտադիր վճարները):

6. Իրականացված ծրագրերը՝

Table with 3 columns: №, Ծրագրի անվանումը, Ծրագրային ծախսը (հազ. դրամ). Rows include various social and educational programs with amounts ranging from 81,901.8 to 5,009,562.0.

7. Ֆինանսավորման աղբյուրները՝

Table with 3 columns: №, Դրամական մուտքեր, Գումարը (հազ. դրամ). Rows list funding sources like state budget, grants, and other income.

8. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ 73,190,634.8
8.1 Կանոնադրական նպատակների իրականացման ուղղված ծախսերի չափը՝ 73,190,634.8

Հիմնադրամի գլխավոր տնօրեն



Գլխավոր հաշվապահ-հաշվապահական հաշվառման բաժնի պետ

Գոհար Ղարիբյան



Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՎԱՐՎԱ ԱՐՑԱՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ (կառավարության անվանումը) ԱՐԿՑՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԾԱՍՄՆԵՐԻ, ՈՆՊԵՆ ՆԱԵՎ ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻՆ (Ժամանակահատվածը՝ 2022 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը)

1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎՈՒՄ ՍՈՒՏՔ ԱՐՎԱՏ ԵՎ ԾԱՍՄՎԱՏ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

Table with 5 columns: Աղբյուրները, Բանակը, Արժեքը (հազ. դրամ), Հատկացման ձևը (կանխիկ/փոխանցում, բանկային հաշիվ/դրամարկղ), Այլ տվյալներ. Rows include various income and expenditure items.

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՎՈՐՈՒՄ ԳՈՒՅՔԸ

Table with 5 columns: Աղբյուրները, Բանակը, Արժեքը (հազ. դրամ), Գույքի անվանումը, հասցեն, համարոտ նկարագիր, չափսերը, Այլ տվյալներ. Rows include asset acquisition and disposal items.

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԻՄԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ

Table with 5 columns: Աղբյուրները, Բանակը, Արժեքը (հազ. դրամ), Գույքի անվանումը, մակնիշը և սերիան, թողարկման տարեթիվը, Այլ տվյալներ. Rows include fixed asset acquisition and disposal items.

Հաստատված է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 24 մարտի 2023թ. 01 որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ «Լուսաբերդ»

հիմնադրամի 2022թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ Լուսաբերդ հիմնադրամ
1.1 Գրանցման համարը՝ 443.160.11642299
1.2 Գրանցման ամսաթիվը՝ 22.02.2021թ.
1.3 Գտնվելու վայրի հասցեն՝ ք. Ստեփանակերտ, Աբովյան 2/9
1.4 Հեռախոս՝ +374-97-21-41-42

2. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝ Օսիպյան Վարդուհի Կիմի

3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝ Նախագահ՝ Գարրիելյան Կիմ Եղիշեի, Անդամ՝ Հակոբյան Լեոնիկ Մանվելի, Անդամ՝ Մարտիրոսյան Անուշ Լևոնի

4. Աշխատակազմը՝ Դեկավար անձնակազմի աշխատակիցներին (1 հոգի) վճարված աշխատավարձ կազմել է 1800000

5. Իրականացված ծրագրերը՝ Զրատարակչական ծախսեր՝ 5585100, Գրքերի տպագրություն՝ 1684500, Թերթերի տպագրությանն աջակցություն՝ 1452600, Կրթական թերթի հրատարակմանն աջակցություն՝ 850000, Թերթերի և հանդեսների բաժանորդագրություն՝ 1598000, Կրթական ծրագրերին աջակցության ծախսեր՝ 2884500, Ուսանողների կրթավարձի վճարում՝ 1217500, Ուսանողներին համակարգչային տեխնիկայի նվիրաբերում՝ 544000, Բուհի տեխնիկական օժանդակություն՝ 1023000, Գյուղական երիտասարդական կենտրոնին կրթական օգնություն՝ 100000, Աջակցություն ժուռնալիստների միության ծրագրերին՝ 2000000

6. Ֆինանսական աղբյուրները՝ Անհատույց դրամական ստացումներ ֆիզիկական անձանցից՝ 8674200

7. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ Կանոնադրական նպատակների իրականացման ուղղված ծախսերի չափը՝ 3227480



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԴԻՄՈՐՂՆԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնը սույն թվականի ապրիլի 15-ից սկսում է 2023թ. բուհերի ընդունելության համար մասնագիտության ընտրության և ընտրած մասնագիտության համար սահմանված միասնական և ներբուհական քննությունների հայտագրման գործընթացը:

Դիմորդը ընդունելության քննություններին մասնակցելու և ընտրած մասնագիտությունը նշելու համար ընդունելության դիմում-հայտը էլեկտրոնային եղանակով ուղարկում է՝

- Արցախի Հանրապետության ԳԹԿ «atc.nk.am@mail.ru» էլեկտրոնային փոստին, եթե ցանկանում է ընդունվել Արցախի Հանրապետության որևէ բուհ կամ Հայաստանի Հանրապետության բուհ՝ Արցախի Հանրապետությանը հատկացված տեղերով, և ընտրած մասնագիտության ընդունելության մրցութային քննությունները միասնական են,
- Հայաստանի Հանրապետության ԳԹԿ կայքէջ, եթե ցանկանում է ընդունվել Հայաստանի Հանրապետության

բուհ՝ Արցախի Հանրապետությանը հատկացված տեղերով և ընտրած մասնագիտության ընդունելության քննությունները ներբուհական են, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության որևէ բուհ՝ ոչ նպատակային տեղերով:

- Ընդունելության դիմում-հայտի համար անհրաժեշտ է նաև՝
- 3x4 չափսի լուսանկարի էլեկտրոնային տարբերակը,
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- յուրաքանչյուր քննության համար փոխանցել 1500 դրամ՝ միասնական քննությունների համար Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության ԳԹԿ-ի 915013000145 հաշվեհամարին, ներբուհական քննությունների համար համապատասխան բուհի հաշվեհամարին, և փոխանցված գումարի անդորրագրի էլեկտրոնային տարբերակը ուղարկել դիմում-հայտի հետ:

Ընդունելության քննությունների վճարից ազատվում են՝

- Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապե-

տության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ծնողները, ամուսինը (կինը), մինչև 27 տարեկան զավակները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները,

- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաները,
- առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները:

Նշված արտոնություններից օգտվող դիմորդները համապատասխան տեղեկանքի էլեկտրոնային տարբերակը ուղարկում են ընդունելության դիմում-հայտի հետ:

Դիմում-հայտերի ընդունման վերջին ժամկետը ս. թ. մայիսի 8-ն է, ժամը 18:00-ն:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (047)97-40-51 հեռախոսահամարին:

ԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՃՈՐԴ-ՎԱՃԱՌՔ

«Մնանկության մասին» ԱԶ օրենքի 89-րդ հոդվածի համաձայն 2023թ. ապրիլի 26-ին ժամը 12:00-ին «Մայակ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանի կողմից, ԱԶ ԸԻ առաջին ատյանի դատարանի՝ ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42 հասցեում հայտարարվում է դասական եղանակով աճուրդ-վաճառք հետևյալ լոտերով՝

Լոտ 2 - Հարիչ (միքսեր)՝ Steno PL60L/3VP 1 հատ, 2 հատ ամանով՝ 60 լիտր, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **352.256 ՀՀ դրամ**:

Լոտ 3 - Կրեմի սրկիչ՝ DE DANIELI RMP83 15 լիտր, 1 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **122.880 ՀՀ դրամ**:

Լոտ 4 - Խմորի գնդեր սարքող սարք՝ RAM S30 1 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **327.680 ՀՀ դրամ**:

Լոտ 5 - Խմորհարիչ՝ K-M130 130կգ 1 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփակա-

նատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **409.600 ՀՀ դրամ**:

Լոտ 6 - Վառարակ՝ Bassanina zoom 1212 1 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է անաշխատունակ վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **819.200 ՀՀ դրամ**:

Լոտ 7 - Դարակաշար ռատացիոն վառարանի համար՝ 50x70սմ (18 դարակ) 7 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **114.688 ՀՀ դրամ**:

Լոտ 8 - Խմորի գնդեր բացող սարք՝ Kempflex SF600/1400 1 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **286.720 ՀՀ դրամ**:

Լոտ 9 - Դարակաշար թիթեղներով ռատացիոն վառարանի համար՝ 60x80 սմ (18 դարակ) 7 հատ, մետաղյա թիթեղներ (դարակ) 72 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **172.851 ՀՀ դրամ**:

Լոտ 10 - Դարակաշար թիթեղներով ռատացիոն վառարանի համար՝ 60x80 սմ (18 դարակ) 18 հատ, մետաղյա թիթեղներ (դարակ) 108 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **412.877 ՀՀ դրամ**:

Լոտ 11 - Խմորհարիչ՝ EFFEDUE KG.160 160կգ 1 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **532.480 ՀՀ դրամ**:

Լոտ 12 - Խմորի հասունացման խցիկ՝ 294x04x200սմ չափսի, պատերը՝ ինքնաշեն, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **368.640 ՀՀ դրամ**:

Լոտ 13 - Վառարակ՝ Bassanina rotor 57 1 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է անաշխատունակ վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **819.200 ՀՀ դրամ**:

Լոտ 14 - Թիթեղյա դարակներ՝ 150 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփակա-

նատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **61.440 ՀՀ դրամ**:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ ՖԱ-ի դեպքում անձնագրի պատճենը, իսկ ԻԱ-ի դեպքում՝ պետական գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթերը: Նախավճարը կազմում է մեկնարկային գնի 5 տոկոսը, որը փոխանցվում է սնանկության հատուկ հաշվին՝ «Հայքիզնեսբանկ» ՓԲԸ «Ստեփանակերտ» մ/դ հ/հ 1150012179069063:

Աճուրդին մասնակցելու ցանկացողները աճուրդին նախորդող 5 օրվա ընթացքում, ընդհուպ մինչև աճուրդին նախորդող օրվա 16.00-ն, կարող են հայտ ներկայացնել՝ ԼԴՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ մասնակցի վկայական ստանալու համար: Աճուրդում հաղթող է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Գնորդը կրելու է գույքի ձևակերպման, գրանցման և գույքահարկի պարտքերի վճարման պարտավորությունները: Մանրամասներին ծանոթանալու համար դիմել սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանին: Հեռ.՝ 097-22-29-22 կամ 043-08-17-33»:

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա.Խաչատրյան

ԸԻԴ/0001/04/23 «ԱՆԱՐ» ՍՊԸ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԴԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՅՈՒՅԱԿ

h/h	Պահանջատիրոջ անվանումը	Պահանջի չափը	Պահանջների հարթման և «Սնանկության մասին» ԼԴՀ օր»-նքի
1	Արցախի ներդրումային հիմնադրամ	19.343.629,90 ՀՀ դրամ	Ապահովված պահանջ՝ գրավ և երաշխավորություն
2	ԱԶ ՊԵԿ	250.000,0 ՀՀ դրամ	95 հոդվածի 1-ին մաս / 4 / հոբ
3	ԱԶ ՊԵԿ	157.210.500,0 ՀՀ դրամ	95 հոդվածի 1-ին մաս / 7 / հոբ

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա.Խաչատրյան

ԼՈՒՍԱՐՎՈՒՄ Է

«Քարվաճառի սանձաքրում-կանաչապատում» փակ բաժնետիրական ընկերությունը: Պարտատերերին խնդրվում է երկամսյա ժամկետում հետաքրքրող հարցերով դիմել նշված կազմակերպության լուծարման հանձնաժողով: Հեռ.՝ 0479 5 06 93:

ՀՈՒՅՍ ԵՎ ԼՈՒՅՍ



ԼՈՒՍԱՐԱՐ

ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Տպաքանակ՝ 1650: Ստորագրված է տպագրության 06.04.2023թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: